



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3527

Горы Крым

Р. Крым.

491.99-8

7-23

1902

2010

BB 2002

34րդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂԶ ԴԱՏԱԼԹԱՅԲ
ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆՈՐ ԴՊՐՈՑ

Բարոյագիտութիւն, Բաղաբ. Կրթութիւն,
Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուարանութիւն,
Դիտութիւններ, Մայրենի լեզու

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ

Տարրական Ընթացք

Թ. Պ Ր Ա Կ

ԳԻՐԳ ԱՇԱԿԵԻՏԻՆ

معارف نظارت جلیله سنک ۴۰۰ نومروى و فى ۲۱ تشرین

تاریخلو رخصتنامه سیله طبع اوتمشدر
1.99-8

23

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Զ

ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

1902

491.98-8 ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ
7-23 ԴԱՍԱՑՈՒՑ ԱԿ
58.

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

1. Թուարանոսիւն, 1. Դաս, Ծառալի չափերը, էջ 29:
2. Մայրենի լեզու, 1. Դաս, Ամիրսիւսի Բ. ամուսան, էջ 53:
3. Բարոյագիտութիւն, 1. Խօսակցութիւն, Պարկեշտութիւն, էջ 1:
4. Աշխարհագրութիւն, 1. Դաս, Հրահանգներ, էջ 21:
5. (Գիր*):

ԵՐԵՔՇԱԲԹԻ

1. Մայր. լեզու, 2. Դաս, Արատանոս. (Կեանքի ծրագիր), էջ 54:
2. Թուարանոսիւն, 2. Դաս, Ծառալի չափերը (Շար.) էջ 29:
3. Պատմութիւն, 1. Դաս, Շնորհալի, էջ 12:
4. (Գծագրութիւն):
5. (Երգ):

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

1. Գիտութիւններ, 1. Դաս, Գարեբ. էջ 44:
2. (Գիր):
3. Թուարանոսիւն, 3. Դաս. Պարունակութեան չափերը, էջ 30:
4. Մայրենի լեզու, 3. Դաս, Վերածութիւն (Դերանուն), էջ 55:
5. (Մարմնամարզ):

ՀԻՆԳՇԱԲԹԻ

1. Մայրենի լեզու, 4. Դաս, Հրահանգներ, էջ 56:
2. Բարոյագիտ. 2. Խօսակցութիւն, Բարոյական առաջնութ. էջ 2:
3. Աշխարհագր. 2. Դաս, Եւրոպա (Կլիմա և արտադրութ.), էջ 21:
4. Թուարանոս. 4. Դաս, Պարունակութ. չափերը, (Շար.), էջ 31:
5. (Գիր):

ՈՒՐԲԱԹ

1. Պատմութիւն. 2. Դաս, Լամբրոնացի, էջ 13:
2. Մայրենի լեզու, 5. Դաս, Ամականը Պոյականի տեղ, էջ 57:
3. (Երգ):
4. (Գծագրութիւն):
5. Թուարանոս. 5. Դաս, Պարունակութ. չափերը, (Շար.), էջ 31:

ՇԱԲԱԹ

1. Բաղաւ. Կրթութիւն, 1. Դաս, Դասախարակութիւն, էջ 8:
2. Գիտութիւններ, 2. Դաս, Գարեբ (Շար.) էջ 45:
3. (Արտատանութիւն):
4. (Գիր):
5. (Մարմնամարզ):

(*) Փակագծի մէջ զրուած առարկաները ըստ Դպրոցի մէջ չկան:

ԵՐԿՈՐԴ ՇԱԲՅ
Դ Ա Ս Ա Յ ՈՒ Ց Ա Կ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

1. Թուարան. 6. Դաս, Պարունակուր. չափերը (Շար.), էջ 32:
2. Մայրենի լեզու, 6. Դաս, Հրահանգներ, էջ 58:
3. Բարոյագիտութ. 3. Խօսակց. Երարական առողջութ. էջ 2-3:
4. Աշխարհագր. 3. Դաս, Ամբիփուս Ը. ամառան, էջ 22-23:
5. (Գիր):

ԵՐԵՔՇԱԲԹԻ

1. Մայրենի լեզու, 7. Դաս, Չայնաուր գրեք, էջ 59-60:
2. Թուարանութիւն, 7. Դաս, Թղթի չափերը, էջ 32:
3. Պատմութիւն, 3. Դաս, Շարական (Առաւոտ շուտոյ), էջ 14:
4. (Գծագրութիւն):
5. (Երգ):

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

1. Գիտութիւններ, 3. Դաս, Բուսածոյ, էջ 46:
2. (Գիր):
3. Թուարանութ. 8. Դաս, Ծանրութեան չափերը, էջ 33:
4. Մայր. լեզ. 8. Դաս, Արտասանութ. (Աղն ու Սպռեկը), էջ 60-61:
5. (Մարմնամարզ):

ՀԻՆԳՇԱԲԹԻ

1. Մայրենի լեզու, 9. Դաս, Մասնիկներ, էջ 62:
2. Բարոյագիտութիւն, 4. Խօսակցութիւն. Համեստութիւն, էջ 3-4:
3. Աշխարհագրութիւն, 4. Դաս, Ասիոյ եզերքները, էջ 24:
4. Թուարանութ. 9. Դաս, Ծանրութեան չափերը (Շար.), էջ 34:
5. (Գիր):

ՈՒՐԲԱԲ

1. Պատմութիւն, 4. Դաս, Խաչի սօներ, էջ 15:
2. Մայրենի լեզու, 10. Դաս, Պարզ եւ բարդ բառեր, էջ 63-65:
3. (Երգ):
4. (Գծագրութիւն):
5. Թուարանութ. 10. Դաս, Ծանրութեան չափերը, (Շար.) էջ 34:

ՇԱԲԱԲ

1. Բաղաբ. Կրթութիւն, 2. Դաս, Բարձ. եւ Մասնագ. Վարձ. էջ 9:
2. Գիտութիւններ, 4. Դաս, Հողեր, էջ 47:
3. (Արտասանութիւն):
4. (Գիր):
5. (Մարմնամարզ):

ԵՐՐՈՐԴ ՇԱԲՅ
Դ Ա Ս Ա Յ ՈՒ Ց Ա Կ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

1. Թուարանութ. 11. Դաս, Ծանրութեան չափերը (Շար.), էջ 35:
2. Մայրենի լեզու, 11. Դաս, Հրահանգներ, էջ 65-66:
3. Բարոյագիտութ. 5. Խօսակցութիւն, Տղէք ըլլալն ամօք է, էջ 5:
4. Աշխարհագր. 5. Դաս, Ասիոյ լեռներ, դաշտեր, էջ 24-25:
5. (Գիր):

ԵՐԵՔՇԱԲԹԻ

1. Մայրենի լեզու, 12. Դաս, Սացական մասնիկներ, էջ 66-68:
2. Թուարանութ. 12 Դաս, Ծանրութեան չափերը (Շար.) էջ 36:
3. Պատմութիւն, 5. Դաս, Խաչի սօներ (Շար.), էջ 16:
4. (Գծագրութիւն):
5. (Երգ):

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

1. Գիտութիւններ, 5. Դաս, Հողը հերկել, էջ 48-49:
2. (Գիր):
3. Թուարանութիւն, 13. Դաս, Դրամներ, էջ 36:
4. Մայրենի լեզու, 13. Դաս, Սաց. մասնիկներ (Շար.), 68-70:
5. (Մարմնամարզ):

ՀԻՆԳՇԱԲԹԻ

1. Մայրենի լեզու, 14. Դաս, Դերբայ, էջ 71:
2. Բարոյագ. 6. Խօսակցութ. Միշտ նշմարախօս ըլլալու է, էջ 5:
3. Աշխարհ. 6. Դաս, Ասիոյ կլիման եւ արտադրութ. էջ 25-26:
4. Թուարանութիւն, 14. Դաս, Դրամներ (Շար.), էջ 37:
5. (Գիր):

ՈՒՐԲԱԲ

1. Պատմութիւն, 6. Դաս, Հայերը՝ ժ.Բ. - ժ.Գ. դարերուն, էջ 17:
2. Մայրենի լեզու, 15. Դաս, Դերբայ (Շար.) էջ 72:
3. (Երգ):
4. (Գծագրութիւն):
5. Թուարանութիւն, 15. Դաս, Դրամներ (Շար.), էջ 38:

ՇԱԲԱԲ

1. Բաղաբ. Կրթութիւն, 3. Դաս, Ազգ. դաստիարակութ. էջ 9-10:
2. Գիտութիւններ, 6. Դաս, Պարտաւորութիւն, էջ 50:
3. (Արտասանութիւն):
4. (Գիր):
5. (Մարմնամարզ):

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲՔ

Դ Ա Ս Ա Յ Ո Ւ Ց Ա Կ

Ե Ր Կ Ո Ւ Շ Ա Ք Յ Ի

1. Թուաբանութիւն, 16. Դաս, Դրամներ (Շար.), էջ 39:
2. Մայրենի լեզու, 16. Դաս, Համաձայնութիւն, էջ 73:
3. Բարոյագիտ. 7. Խօսակցութիւն, Պէտք է օգտակար ըլլալ, էջ 6:
4. Աւխնագր. 7. Դաս, Աստիճակով սովորեցնելու պէտք էջ 26-27:
5. (Գիր):

Ե Ր Ե Ք Շ Ա Ք Յ Ի

1. Մայրենի լեզու, 17. Դաս, Վերջումութիւն, էջ 74-75:
2. Թուաբանութիւն, 17. Դաս, Դրամներ (Շար.), էջ 39-40:
3. Պատմութիւն, 7. Դաս, Հայերը ժ.Գ.—Փ.Յ. դարերուն, էջ 18:
4. (Գծագրութիւն):
5. (Երգ):

Զ Ո Ր Ե Ք Շ Ա Ք Յ Ի

1. Գիտութիւններ, 7. Դաս, Արտերը ցրել եւ ցամակցնել, էջ 51:
2. (Գիր):
3. Թուաբանութիւն, 18. Դաս, Փամատակի չափերը, էջ 41:
4. Մայրենի լեզու, 18. Դաս, Խօսակցութեան մասերը, էջ 75-77:
5. (Մարմնամարզ):

Ճ Ի Ն Գ Շ Ա Ք Յ Ի

1. Մայր. լեզու, 19. Դաս, Անհատականութեան նշաններ, էջ 77-78:
2. Բարոյագիտութ. 8. Խօսակցութ. Պէտք է ինքզինքն ուղղել, էջ 7:
3. Աւխնագրութիւն, 8. Դաս, Հրահանգներ, էջ 28:
4. Թուաբանութիւն, 19. Դաս, Ամփոփում Թ. ամսուան, էջ 42:
5. (Գիր):

Ո Ւ Ր Բ Ա Ք

1. Պատմութիւն, 8. Դաս, Ամփոփում Թ. ամսուան, էջ 19-20:
2. Մայր. լեզու, 20. Դաս, Աւղղագրութեան նշաններ, էջ 79-80:
3. (Երգ):
4. (Գծագրութիւն):
5. Թուաբան. 20. Դաս, Ամփոփում Թ. ամսուան, (Շար.) էջ 43:

Շ Ա Ք Ա Ք

1. Բաղաձ. Կրթութիւն, 4. Դաս, Տղայագրութ. եւ կրագր. էջ 10-11:
2. Գիտութիւններ, 8. Դաս, Ամփոփում Թ. ամսուան, էջ 52:
3. (Արտագրութիւն):
4. (Գիր):
5. (Մարմնամարզ):

428
87-ԴԱ

Բ Ա Ր Ո Յ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ե
31443-41
ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆ



1002
3078
ԲՏ-62541

1. Խօսակցութիւն. — Պարկեշտութիւն. — Մարդը անասուններէն բարձր է, որովհետեւ կրնայ մտածել թէ ինչ բանը բարի, ինչ բանը չար է: Եթէ հում մտի կտոր մը թողունք կատունն առջեւ, կատուն կը գողնայ: Չենք կրնար մեղադրել կատուն որ կը գողնայ, որովհետեւ ան՝ մինակ իր վերքը կշտայնելուն վրայ կը խորհի, ուրիշ բան չի հասկնար: Եթէ կատուն միտք գողցաւ ու անպատիժ մնաց, շատ ուրախ կ'ըլլայ և ուրիշ անգամ նորէն կ'ընէ: Բայց մարդը այսպէս չէ: Տղայ մը եթէ ուղէ բան մը գողնալ, նախ չորս կողմը կը նայի, երբ ապահով ըլլայ թէ մարդ չի տեսներ զինքը, կը գողնայ: Բայց գողնալէն յետոյ սիրտը հանգիստ չի մնար, միշտ կը կասկածի, ներքին ձայն մ'իրեն կ'ըսէ թէ «Գէշ բան ըրիր»: Այս ներքին ձայնին խիղճն կ'ըսուի:

Երբ տղայ մը սուտ խօսի, բան գողնայ, մէկը զըրպարտէ, այս խիղճը կը յանդիմանէ զինքը, և տղան ինքն իրեն կը չարչարուի, եթէ ուրիշէն չյանդիմանուի: Ազնիւ տղու մը դէմքը միշտ ուրախ ու համարձակ կ'ըլլայ, ընդհակառակն՝ յանցանք գործող, սուտ ըսող, գողութիւն ընող տղու մը դէմքը միշտ կասկածոտ կ'ըլլայ, միշտ խոժոռ, բարկացոտ, վախկոտ:

Այո՛, մարդ կրնայ յանցանք մը գործել, բայց ազնիւ մարդը անմիջապէս կը զղջայ և ինքն իրեն խօսք կուտայ ուրիշ անգամ յանցանք չգործել: Եթէ մարդ իր խղճի ձայնին չլսէ, շատ ստորին կ'ըլլայ, անասուններուն կարգը կ'իջնէ: Պարկեշտ կ'ըսուի ան տղան որ կը զգուշանայ ո՛րեւէ յանցանք գործելէ, և սուտ խօ-

սիրը, գողութիւնը, ուրիշներու վրայ յանցանք նետելը ստորութիւն կը սեպէ:

1. Առած. — Մեր բնաւորութեան մեջ շատ բաներ կան որ շինելու է, շատ բաներ կան որ փակելու է:

2. Առած. — Արդարութիւնն ու իրաւունքը ֆեզի առաջնորդ ընտրէ:

Չ. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Բարոյական առողջութիւն. — Բարոյական առողջութիւնը այն է որ մարդ մը ուրախ դուարի՞թ ըլլայ, աշխատութիւնը սիրէ՞ և կեանքէն դո՞ ըլլայ:

Բարոյապէս առողջ ըլլալու համար, պէտք է աշխատել: Եթէ տղայ մը առաւօտէ մինչեւ իրիկու խաղալով անցնէ, օր մը, երկու օր, յետոյ կը սկսի ծանձրանալ, դէմքը կը գէշնայ և տխմարի դէմք կ'ըլլայ: Տղայ մը մլտք ունի, սիրտ ունի՝ պէտք է երկուքն ալ գործածէ, մտքովը բաներ մը պիտի սորո՞ի, սրտովը օգտակար պիտի ըլլայ զինքը շրջապատողներուն: Երբ չգործածէ իր այս գեղեցիկ կարողութիւնները, անոնք կը տկարանան, կ'ոչնչանան: Չաշխատող տղան տխուր կ'ըլլայ, ծոյլ կը դառնայ, և տեսակ մը հիւանդ վիճակ կ'ունենայ, ամէն բանէ կը դանդաւար, ինք իրմէ դո՞ չէ: Մէկ խօսքով բարոյապէս հիւանդ է: Իսկ անոնք որ կ'աշխատին, զուարթ են, անոնց միտքը ամենեւին չի հիւանդանար:

3. Առ. — Մարդ ինք իր ձեռքով կը շինէ իր ճակատագիրը՝ կը բարձրանայ կամ կ'իջնայ իր գործերուն համեմատ:

Յ. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Նիւթական առողջութիւն. — Տղա՛քներ, լաւ հոգ տանելու էք ձեր առողջութեանը:

Ձեզի շատ պարզ պատմութիւն մ'ընեմ և պիտի համոզուիք թէ ի՞նչ գէշ բան է առողջութեան վրայ չխորհիլը:

Ես երկու ընկերներ ունէի, մէկը թէեւ աղքատի զաւակ, բայց միշտ մաքուր կը հագուէր, ինքզինքը մաքուր կը պահէր և մինակ կերակուրի ատեն բան կ'ուտէր: Միւսը, հարուստի զաւակ, բայց աղտոտ. ձեռքերը, դէմքը անմաքուր, շատ անգամ ցուրտը պատճառ բռնելով չէր լուացուիր: Ո՛չ միայն կերակուրի ատեն շատ կ'ուտէր, այլ և ճաշի ատենէն դուրս ալ բաներ կը գնէր կ'ուտէր: Այս վերջին տղան շարունակ հիւանդոտ էր: Այսօր ակուս կը ցաւի, կ'ըսէր, վաղը փոքս, միւս օրը դուրս: Միւս տղան միշտ քաջառողջ էր: Երկուքն ալ մեծցան: Հիմա այդ հարուստին տղան նիհար, ողորմալի, դեղնած դէմք մ'ունի, որովհետեւ ինքն իրեն հոգ չի տանիր, իսկ միւսը զօրաւոր, կայտառ՝ կարմիր երեսներով երիտասարդ մ'է: Առաջինը միշտ տըխուր՝ որովհետեւ հիւանդ է, երկրորդը միշտ զուարթ՝ որովհետեւ քաջառողջ է:

4. Առած. — Երե մարդու մարմինը առողջ չըլլայ, միտքն ալ առողջ չ'ըլլար:

5. Առած. — Առողջութիւնը ամենեւնի քանկազիւ բանն է, պիտի է որ աղիկ պահպանենք:

Զ. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Համեստութիւն. — Սիրուն մանրավէպ մը պատմեմ ձեզի՛ մտիկ ըրէք: Ատենով հարուստ կին մը շատ կը ծերանայ և ամենեւին զաւակ չ'ունենար: Այս կինը կը բնակէր իր մեծ ագարակին մէջ որուն քովը պզտիկ գեղ մը կար: Հարուստ կինը, տեսնելով որ իր օրերը մօտեցած են, միտքը կը գնէ իր բոլոր կալուածներն ու հարստութիւնը տալ այն գիւղացի աղջկան որ ամէնէն համեստն է:

Ուստի օր մը լուր կը դրկէ գիւղին բոլոր աղջիկներուն և զանոնք իր տունը կը նրաւիրէ՝ ուրախ ժամանակ անցընելու, և կ'իմացնէ թէ որո՛ւն որ հաւնի, իրեն ժառանգ պիտի ընտրէ: Գիւղին բոլոր աղջիկները կուգան, շատերը գեղեցիկ, գոյնզգոյն շրջազգեստներ հագած, գլուխնին սիրուն գլխարկներ, գլխարկներուն վրայ գոյնզգոյն փետուրներ և արուեստական ծաղիկներ: Ամէնքն ալ սրահին մէջ մտած ժամանակ, կ'երթան մեծ հայելիին առջև՝ ինքզինքնին կը դիտեն ու նազելով կը պտըտին: Ասոնց հետ, ամէնուն ետեւը կայնած էր Վարդուհի: Միջահասակ, չէկ մազերով սիրուն աղջիկ մը, որ հագած էր պարզ շրջազգեստ մը, գլուխը դրած էր հասարակ գլխարկ մը. վրան դեռ նոր քաղուած վայրի կապոյտ ծաղիկներու պղտիկ փունջ մը կար, Վարդուհի չէր համարձակիր հայելին մօտենալ, կ'ամէնար, կը դիտէր իր սիրուն ընկերները, բայց չէր նախանձիր, իսկ անոնք իր երեսն անգամ չէին նայիր. այնքան խեղճ հագուած էր:

Հարուստ տիկինը կը պտըտէր աղջիկներուն մէջ՝ ամէնուն հետ քաղցրութեամբ կը խօսէր: Երբ Վարդուհին առջեւն եկաւ, տեսաւ որ խեղճ աղջիկը ամէնալէն կարմրեցաւ, շիթթեցաւ: Տիկինը կը ճանչնար զայն արդէն, շատ անգամ գիւղին մէջ պտըտած ատեն, տեսած էր որ անիկա գառնուկները արածելու կը տանի: Ամէն մարդ գիտէր որ անիկա հովիւին աղջիկն է և ամէն մարդ կը գոլէր Վարդուհին: Տիկինը բոլոր աղջիկներուն մէջ ամէնէն համեստը Վարդուհին գտաւ, ձեռքը անոր երկնցուց, գրկեց, համբուրեց զայն և ըսաւ բարձր ձայնով, «Աղջիկս, իմ ժառանգորդս դուն պիտի ըլլաս»:

6. Առած. — Այն որ հաւեստութեամբ ինկզիսիք կը ծածկէ, ամենեկն արժանաւոր մարդն է:

5. ԽՍՈՒԿՑՈՒԹԻՒՆ. — Տգեա ըլլալն ամօր է. — Ատենով աղէկ դպրոցներ չկային ու կանոնաւոր բաներ ալ չէին սորվեցնէր այն ժամանակ: Բայց հիմա որ ամէն տեղ դպրոցներ կը գտնուին, տղու մը համար ամենամեծ ամօթ է եթէ գրել-կարդալ չսորվի: Ինչ գործի մէջ ալ մտնենք, գրել կարդալ պէտք է, անոր միջոցաւ թէ՛ աւելի կը շահինք, թէ՛ աւելի յարգ ու պատիւ կը ստանանք: Գիտուն մարդիկ կան որ մեծ անուն հանած են: Այս մարդիկ, կրնանք ըսել թէ, հազարաւոր ոսկի ունեցողներէն աւելի հարուստ են: Եւ իրա՛ւ, չափազանց հարուստ մէկը կրնայ օր մը յանկարծ իր հարստութիւնը կորսնցնել, օրինակ հրդեհ մը կը պատահի և ունեցած չունեցածը կ'այրէ, բայց գիտունը ո՛ւր որ երթայ, ո՛ւր ալ գտնուի, իր խելքով պատուաւոր վիճակ մը կ'ունենայ:

7. Առած. — Մարդու բոլոր արժանիքը իր մտքին մեջն է:

8. Առած. — Աւելի աղէկ է աղիս ըլլալ, քան սղիս. աղիսը քանի մը քսակեր գրկուած է, գորով օր մը կրնայ ձեռք բերել, սղիսը աւելի՛ կարեւոր քսակեր գրկուած է:

6. ԽՍՈՒԿՑՈՒԹԻՒՆ. — Միշտ նշմարախօս ըլլալու է. — Աւելի ամօթ ու զգուշի բան կ'ո՞րքան սուտ խօսիլը: Տղայ մը որ սուտ կը խօսի, պատիւ չունի. տղայ մը որ միշտ ճշմարիտ կը խօսի, ամէնէն ընտիր՝ ամէնէն ազնիւ տղան է:

Ուսչինկիթըն, Ամերիկայի մեծ զօրավարը, իր կեանքին մէջ ընաւ սուտ չէ խօսած, նոյն իսկ ձեղի պէս պղտիկ տղայ եղած ատենը:

Օր մը իր հայրը պղտիկ կացին մը տուած է եղեր

իրեն: Ուաշինկիթըն պարտեզ իջնելով՝ կ'երթայ ծառի մը բունին քանի մը հարուած կուտայ, այնպէս որ ծառը քիչ մը կը վնասուի: Իրիկուան դէմ, հայրը պարտեզին մէջ պտըտած ժամանակ, կը տեսնէ վնասուած ծառը, սաստիկ կը բարկանայ և կը հարցնէ թէ ո՞վ ըրաւ: Տղան շատ կը վախնայ, բայց չ'ուզեր սուտ խօսիլ, կ'ըսէ հօրը թէ՛ ես ըրի: Հայրը՝ տեսնելով աղուն ճշմարտախօսութիւնը՝ կը ներէ անոր:

9. Առած. — Բնաւ սոս չպիտի խօսիս:

Յ. ԽՍՈՒԿՑՈՒԹԻՒՆ. — Պէտք է օգտակար ըլլալ. — Այն մարդը որ բնաւ օգուտ մը չունի ուրիշներուն, շատ ոչինչ մարդ է: Ամէն մարդ պէտք է գործ մ'ունենայ որ այդ գործով բան մը շահի: Այն աղքատիկ աղան որ փողոցներէն երկաթէ գամի կտորներ կը ժողվէ որ ծախէ ու բան մը վաստկի, աւելի աղէկ՝ աւելի օգտակար է, քան այն աղան որ ո՛չ արհեստ ունի, ո՛չ գործ: Մեծ փիլիսոփայ մը՝ տեսէք ի՞նչ ըսած է: «Տղա՛քներ, ձեզմէ ամէն մէկուն աշխատութեան բաժին մը կայ: Ի՞նչ որ ալ ըլլայ ձեր աշխատութիւնը, պէտք է ջանաք օգտակար ըլլալ, աղէկ բաներ ընել:

«Ձեր գործին մէջ հաւատարիմ, ճշմարտախօս եղէք և ձեր մարդկային պարտականութիւնը կատարեցէք:

«Օգտակար ըլլալ. աւատիկ ա՛յս պէտք է ըլլայ ձեր կեանքին նպատակը: Ամէն մարդ կրնայ օգտակար ըլլալ, ըլլա՛յ հարուստ, ըլլա՛յ աղքատ, ըլլա՛յ գիտուն, ըլլա՛յ աղէտ»:

10. Առած. — Մեկուն թեւ մի՛ ըրրայ:

11. Առած. — Ո՞վ որ ուրիշներուն օգտակար կ'ըրրայ, ինք իրեն ալ օգտակար կ'ըրրայ:

Տ. ԽՍՈՒԿՑՈՒԹԻՒՆ. — Պէտք է ինքզինքը ուղղել. — Օրը օրին աշխատելով՝ դուք ամէն ամիս, տարուէ տարի աւելի խելացի կ'ըլլաք: Ձեր մարմինը որ տկար է, հետզհետէ կը զօրանայ, որչափ մարմնամարդ ընէք, խաղեր խաղաք: Այսպէս ալ երբ այսօր աղէկ բան մը կ'ընէք, վաղը կ'ուզէք աւելի աղէկ բան մը ընել, հետզհետէ կը վարժուիք: Այսօր սխալ մը կը գործէք, կը զղջաք, վաղը չէք ուզեր այդ սխալը ընել, այս կերպով օր օրի ինքզինքնիդ կ'ուղղէք: Կուգայ օր մը՝ որ բարի բաներու վարժուած կ'ըլլաք և մինակ ուղիղ բաներ կ'ընէք:

Ինչ բանի որ վարժուիք ձեր պղտիկ հասակէն, ան կ'ըլլայ ձեր բնաւորութիւնը երբ մեծնաք:

12. Առած. — Սովորաբար՝ երկրորդ թնուրիս:

ԱՄՓՈՓՈՒՄ ԻՆՆԵՐՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ

Երբ կը զգանք որ գէշ բան մ'ըրինք, կը ցաւինք: Մեր խիղճը մեզի կ'իմացնէ թէ ո՞ր բանը պարկեշտ է, ո՞ր բանը ոչ: Ո՛րչափ կրնանք, աշխատելու ենք որ թէ հոգիով թէ մարմինով առողջ ըլլանք:

Եթէ միշտ աշխատինք ևւ ուրիշներուն համար միշտ բարի ըլլանք, այն ատեն մեր օրերը զուարթ ու երջանիկ կ'անցընենք: Ամենալու ենք տգէտ մնալէ, սորվելու ենք շատ բան, մտ է մեր հաստատուն հարստութիւնը: Սիրենք միշտ ճշմարտութիւնը ևւ աշխատինք օգտակար ըլլալ մեր ծնողքին, մեր բարեկամներուն, մեր քաղաքին: Եթէ մէկը ցուցնէ մեր սըլխալները, անմիջապէս ուղղելու ենք զանոնք: Միշտ պէտք է ինքզինքնիս շտկելու աշխատինք:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1. — Կրթութիւնը երեք աստիճան է, նախնական, երկրորդական եւ բարձրագոյն:

2. — Ամէն դազայի մէջ կան Նախակրթարաններ որոնք երկու աստիճան են. Տարրական (խոյրիսային) եւ Միջնակարգ (ոխշիսային):

3. — Սանճագներու մէջ կայ, ասոնցմէ՛ զատ, նաեւ բարձրագոյն նախակրթարան (իւստիսային):

4. — Վիլայէթներու մէջ ալ, աս երեքէն զատ, կան Երկրորդական վարժարաններ:

5. — Նախակրթարաններու մէջ կ'աւանդուին Թուրքերէն լեզու, եւ գրականութիւն, բարոյական եւ քաղաքացիական կրթութիւն, ընթերցում, զիբ, պատմութիւն, աշխարհագրութիւն, օրէնսդիտական եւ անտեսագիտական ծանօթութիւններ, բնական, բնագիտական եւ չափագիտական ուսումներ, երկրագործական, ատողջաբանական եւ ճարտարարուեստական սկզբունքներ, ձեռական աշխատութիւններ, գծագրութիւն, երաժշտութիւն, մարմնամարզ եւ ասեղնագործութիւն:

6. — Երկրորդական վարժարաններու մէջ կ'աւանդուին նաեւ օտար լեզուներ՝ ֆրանսերէն, անգլիերէն ինչպէս եւ հայերէն, յունարէն, եւայլն:

7. — Բարձրագոյն կրթութիւնը կ'աւանդուի մասնագիտական վարժարաններու մէջ:

1. Կրթութիւնը բաժնի՞ ասի՞նան է: — 2. Գազներու մէջ ի՞նչ ասի՞նանի դպրոցներ կան: — 3. Սանճագներու մէջ: — 4. Վիլայէթներու մէջ: — 5. Նախակրթարաններու մէջ ի՞նչ ուսումներ կ'աւանդուին: — 6. Երկրորդական վարժարաններու մէջ ի՞նչ լեզուներ կ'աւանդուին: — 7. Բարձրագոյն կրթութիւնը ո՞ր դպրոցներու մէջ կ'աւանդուի:

2. ԴԱՍ. — ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐ

1. — Պետական այլեւայլ վարժարանները հաստատուած են՝ արհեստներու, արուեստներու եւ գիտութեանց բարձրագոյն ճիւղերը աւանդելու համար: Ասոնք են.

1. Զինուորական վարժարան (Հարպիյե մեքթեպի):
2. Քաղաքային վարժարան (Միջիյե մեքթեպի):
3. Իրաւագիտական վարժարան (Հոգուդ մեքթեպի):
4. Զինուորական բժշկ. վարժ. (Թրպիյեի Շահսուէ):
5. Քաղաքային բժշկական վարժ. (Թրպիյեի միջիյե):
6. Երկրագործական վարժարան (Չուսպ մեքթեպի):
7. Անասնաբուժական վարժ. (Պայքար մեքթեպի):
8. Զինուորական-Երկրաչափական վարժարան (Միւհեհիսիսուէի ապիթիյե):
9. Քաղաքային-Երկրչփին. վարժ. (Հեհեհեի միջիյե):
10. Վարժապետանոց (Տար-իւշ-մուալլիսիսի):
11. Որբանոց (Տար-իւշ-շեֆազա):
12. Գեղարուեստից վարժարան (Սուսուի նեֆիսե):
13. Համրոյիչէի առեւտրին. վրժ. (Հաւիսիյե քիւնարեք):
14. Նաւային վարժարան (Պանիւիյե մեքթեպի):
15. Համրերու, կոյրերու վրժ. (Տիւիլի վե անս մեքթեպի):
16. Աշխրէթներու վարժարան, եւայլն:

2. — Ինչպէս տեսանք (Ը. Պրակ, էջ 11) Պետութեան ամէն կարգի դպրոցները կախում ունին Հանրային կրթական նախարարութենէն:

1. Որ՞նք են բարձրագոյն վարժարաններ: Ի՞նչ կ'աւանդուին անոց մէջ: — 2. Պետութեան ամէն կարգի դպրոցներու վրայ ո՞ր կր հսկէ:

3. ԴԱՍ. — ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1. — Ամէն հպատակ ազգեր ունին Նախակրթարան վարժարաններ ուր կ'աւանդեն իրենց կրօնքն ու լեզուն: Այսպէս, մենք ունինք եկեղեցիներու կից հաստատուած Թաղային վարժարաններ որոնց ծախքը կը հողայ թաղային սնտուկը (Ժողովուրդին նուէրով), աշակերտներու թոշակներով, եւայլն:

2. — Աստուծոյ կը կառավարուին Թաղ. Խորհուրդներու կողմէ: ընտրուած Հոգաբարձուներով, բայց Թուրքիոյ Հայ վարժարաններու կրթական ուղղութիւնը կուտայ Պատրիարքարանի Ուսումնական Խորհուրդը, որ կ'ընտրուի Ազգ. Վարչութեան կողմէ: Եւ իր հրահանգները գործադրել կուտայ նոյն Հոգաբարձութիւններուն:

3. — Ուսումն. Խորհուրդին պաշտօնն է կրթական Ծրագիր ու Կանոնագիր հաստատել, Տնօրէններն ու Դասատուներն ընտրել, դասադրքերը որոշել, դպրոցներու կանոնաւորութեան հսկել, տարուէ տարի շրջանաւարտ եղողներուն վկայագիր տալ, նոյնպէս ուսուցչական ընտրելիները քննել և անոնց վկայագիր տալ:

4. — Ուսուցիչները կ'ըլլան չորս աստիճան.

Ա. Օգնական Ուսուցիչ կամ Ուսուցչուհի:

Բ. Դաստիարակ » »

Գ. Օգնական-Մասնագէտ:

Դ. Մասնագէտ:

5. — Պոլսէն թէ Գաւառներէն, Թաղային վարժարաններու Հոգաբարձութիւնները ամէն տարի պարտաւոր են Կեդր. Ուսումն. Խորհուրդին զրկել իրենց վարժարանին ուսումնական վիճակացոյցը՝ նշանակելով աշակերտներուն ու դասատուներուն թիւը, տարեկան ծախքերը, եւ այլն:

1. Հպատակ ազգեր ի՞նչ կարգի վարժարաններ ունին եւ ի՞նչպէս կը հոգան զանոնք: — 2. Թաղային վարժարանները ո՞վ կը կառավարէ: Իսկ կրթական ուղղութիւնը ո՞վ կուտայ: — 3. Ի՞նչ է Ուսումն. Խորհուրդին պատօնը: — 4. Ազգ. վարժարաններու ուսուցիչները քանի՞ աստիճան են: — 5. Դպրոցներու տարեկան վիճակացոյցը ո՞վ կը պատրաստէ եւ որո՞ւ կը դրկէ:

4. ԳԱՍ. — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1. — Ժողովուրդին մէջ ուսումն ու կրթութիւնը տարածելու կը նպաստէ տպագրութիւնը, այսինքն գիրքեր, տետրակներ, հանդէսներ, լրագիրներ, եւ այլն տպելու գործը:

2. — Ասոր հաճար կան տպարաններ որոնք մասնաւոր արտօնութեամբ կը հաստատուին: Ամէն Օսմանեան հպատակ կրնայ տպարան ունենալ՝ հաստատուած օրէնքներուն համաձայն՝ բաւական է որ պարկեշտ, վտանակիլ և հաւատարիմ ըլլայ:

3. — Տպագրական Տեսչութիւնը կը հսկէ տպարաններու և լրագիրներու վրայ, յատուկ քննիչներու միջոցաւ, որոնց պաշտօնն է տպուելիք ս'րեւէ գիրք կամ լրագիր առաջուրնէ կարդալ:

4. — Թուրքիոյ մէջ ապրող ամէն աղբի ժողովուրդներ կը հրատարակեն իրենց լեզուով գրքեր, գրական ու գիտական հանդէսներ (տետրակի ձևով լրագիր) և օրաթերթեր, եւ այլն, որոնք աժան գնով կը ծախուին և ամէն մարդ կը կարդայ ու կ'օգտուի անոնց պարունակութենէն:

5. — Լրագիրներու պարունակած նիւթերն են առևտրական, անտեսական, արհեստական, քաղաքական լուրեր, որոնցմէ կ'իմացուի թէ աշխարհի այլեւայլ կողմերն ի՞նչ նորութիւններ կը պատահին, նոյնպէս կրօնական, բարոյական, գիտական, ընկերական և գեղարուեստական նիւթերու վրայ յօդուածներ, եւ այլն: Ամէն դասակարգէ մարդիկ իրենց յարմար լրագիրներ կը կարդան: Դպրոցական տղաք ալ կ'ունենան իրենց յարմար լրագիրներն ու հանդէսները:

6. — Լրագիրներէն զատ, ժողովուրդին կրթութեան նպաստող միջոց մ'է Թատրոնը ուր կենդանի կերպով կը ներկայացուին այլեւայլ խաղեր ու տեսարաններ, այլեւայլ ժամանակներու դէպքեր ու դէմքեր, իրենց լեզուով ու տարազով: Թատրոնի մէջ ներկայացուած խաղերը կ'ընտան թատրերգութիւն, իսկ անոնց մէջի խաղերը կատարողներն ալ կը կոչուին դերասան:

1. Ի՞նչ օգուտ ունի սպարոսիւնը: — 2. Ո՞վ կրնայ սպարան ունենալ: — 3. Ի՞նչ բանի կը հսկէ Տպագրական Տեսչութիւնը: — 4. Ի՞նչ բաներ կը սպուին սպարաններու մէջ: — 5. Ի՞նչ նիւթերու վրայ կը գրուի լրագիրներու մէջ: — 6. Ժողովուրդին կրթութեան նպաստող ուրիշ ի՞նչ բաներ կան:

1. ԴԱՍ. — ՇՆՈՐՀԱԼԻ

1. Ս. Ներսէս Շնորհալի. — Գրիգորիս Գ. Պանչաւունի Կաթողիկոսին կրտսեր եղբայրն է Ս. Ներսէս (1102—1172) որ իր սրբանէր վարքին համար՝ կոչուեցաւ Շնորհալի: Ներսէս իր եղբոր մահէն երեք ամիս առաջ, անոր ձեռքով բարձրացաւ Կաթողիկոսական աթոռը:

2. Ս. Ներսէս Շնորհալի ճամբորդութեան մ'ատեն Մամբուտիա (Միսիս) քաղաքը Կիր Մանուէլ կայսեր Ալեքս փեսայն հետ ճանչւորութիւն ընելով՝ Հայ և Յոյն եկեղեցիներուն միջեւ գոյացած տարաձայնութեան վերջ տալու փորձ մ'ըբաւ: Ալեքս՝ լսած ըլլալով Շնորհալիին համբաւը՝ իրեն հետ կրօնական խնդիրներու վրայ խօսակցեցաւ և խնդրեց որ Հայ եկեղեցիին դաւանութիւնն իրեն գրով տայ: Շնորհալին ասանկ երեւելի անձի մը ինքնաշարժ առաջարկութիւնը գրով տուաւ, զոր Ալեքս անձամբ Կ. Պոլիս Մանուէլ կայսրին ու Միքայէլ Պատրիարքին տարաւ: Կայսրը, որ ի բնէ կրօնական խնդիրներու մեծ մտադրութիւն ունէր, Շնորհալիին թղթէն շարժած՝ տարաձայնութեան բուն պատճառները քննութեան տակ ձգեց: Ուստի Սմբատ Հայ պաշտօնատարին ձեռքով Գրիգորիս Կաթողիկոսին թուղթ մը ղրկեց:

3. Սակայն կայսեր նուիրակը դեռ Հռոմիլա չհասած, Գրիգորիս Կաթողիկոսը մտած ըլլալով, իրեն յաջորդած էր Ս. Ներսէսը (1166): Թէորիանոս իմաստասէրը Շնորհալիին քով եկաւ հաւատքի խնդիրներու վրայ խօսելու: Այս խօսակցութեան արդիւնքը Շնորհալին Թէորիանոսի ձեռքով Մանուէլ կայսրին ղրկեց:

Կայսրը՝ Հայոց ղրկած թղթին վրայ՝ Կ. Պոլիս ժողով մը գումարեց ու ինը կէտերու վրայ առաջարկութիւն մը դարձեալ Թէորիանոսի ձեռքով Շնորհալիին ղրկեց: Շնորհալին, այս առաջարկութիւնը խորհրդակցութեան ղնելու համար, մինչ ժողով գումարելու կը պատրաստուէր, վախճանեցաւ 1173ին: Ո՛չ միայն Հայերը, այլ և Յոյներն ալ սգացին այս աննման հայրապետին մահը:

4. Ս. Ներսէսին յաջորդեց իր եղբորորդին, Գրիգոր Գ. Տղայ, որ 1179ին Հռոմիլա ժողով գումարեց: Ժողովին ներկայ գտնուեցան Աղուանից Կաթողիկոսը, Աստուրոց Պատրիարքին պատգամաւորները, երեսուն և մէկ եպիսկոպոս ու բազմաթիւ եկեղեցականներ:

1. Ո՞վ է Ներսէս Շնորհալի: — **2.** ճամբորդութեան մը ատեն որո՞ւ հանդիպեցաւ: Շնորհալին ի՞նչ տեսակ բուրբ գրեց Կիր Մանուէլ կայսրին: — **3.** Թէորիանոս ինչո՞ւ եկաւ Ներսէսին եով: Ե՞րբ վսխեանեցաւ Ներսէս: — **4.** Ո՞վ յաջորդեց իրեն:

2. ԴԱՍ. — ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

5. Ս. Ներսէս Լամբրոնացի. — Հռոմիլայի ժողովին զարդերէն մէկն էր Ս. Ներսէս Լամբրոնացի, Տարսոնի Արքեպիսկոպոսը, ծնած 1153ին բարեպաշտ ու աղնուական սոսմէ: Հայրն էր Օշին Լամբրոնացի ու մայրն ալ Շահանդուխա (Ներսէս Շնորհալիին եղբորն աղջիկը): Լամբրոնացին ժողովականներու առջեւ իր խօսած սքանչելի ատենաբանութեան մէջ շատ ճարտարութեամբ ցուցուց որ Հայ եկեղեցիի մասին գոյութիւն ունեցած տարաձայնութիւնը անհիմն է: Ժողովին որոշումը նամակով մը կայսրին ղրկուեցաւ: Բայց պատգամաւորները դեռ Պոլիս չհասած՝ Կիր Մանուէլ կայսրը մեռաւ: Այնուհետեւ երկու ազգերու միջեւ եղած առաջուան տարաձայնութիւնը դարձեալ արթնցաւ:

Ե. Ներսէն Շնորհալիին ու Ն. Լամբրոնացիին գործերը.
 — Այս երկու Ս. Հայրապետները Հայ. եկեղեցիին զար-
 դերէն են. գրած են բազմաթիւ գիրքեր ու Շարական-
 ներ: Շնորհալիին ծանօթ Շարականներն են «Այսօր ան-
 ձառ», «Աստուած անեղ», «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ
 ամենայն», «Արարչական», «Նորաստեղծեալ», «Նորա-
 հրաշ», եւ այլն: Լամբրոնացին ալ ունի Շարականներ,
 ինչպէս՝ «Այսօր յարեաւ» որ Չասկի առաւօտ կ'երգուի:

Ծ. Ո՞վ է Լամբրոնացի Ներսէս, եւ ինչո՞վ նշանուր եղաւ
 Հռովմայի ժողովին մէջ: — **Ե.** Շնորհալիին ու Լամբրոնացիին ի՞նչ
 շարականներ գրած են:

3. ԳԱՍ. — ՇԱՐԱԿԱՆ

Յ. Շնորհալի Ս. Հայրապետին ամէնէն ծանօթ Շա-
 րականն է Առաւօտ լուսոյ, այբուբենի 36 տառերով սկսող
 հաւարներով, որուն եզանակը կ'արժէ որ սորվինք:

Առաւօտ լուսոյ,
 Արեգակն արդար,
 Առ իս լոյս ծագեալ:
 Բզխումն ի հօր:
 Բզխեալ ի հոգւոյս,
 Բան քեզ ի հաճոյս:
 Գա՛նձդ ողորմութեան,
 Գանձիդ ծածկելոյ
 Գտող զիս արա՛:
 Դուռն ողորմութեան,
 Դաւանողիս բա՛ց
 Դասեցո՛ վերնոց:

Երբեակ միութիւն,
 Եղելոց ինամող,
 Եւ ինձ ողորմեա՛:

Չարթի՛ր, Տէ՛ր, յօգնել,
 Չարթի՛ր զիս թըմբեալս,
 Չուարթնոց նը՛մանիլ:

Է՛դ, հայր անակրդն,
 Էակից սրդի,
 Է միշտ սուրբ հողի, եւ այլն:

Զ. Ո՞վ գրած է «Առաւօտ լուսոյ» շարականը եւ քանի՞ համար է:

4. ԳԱՍ. ԽՈՉԻ ՏՕՆԵՐ

Տ. Խաչվերաց. — Երբ Կոստանդիանոս կայսրին մօ-
 րը՝ Հեղինէյ՝ կրօնասիրական ջանքով Ս. Խաչը գանուե-
 ցաւ Երուսաղէմ: մէջ, Մակարիոս Պատրիարքը Ս. Խա-
 չը բարձրացուց. ժողովուրդը ջերմեանդուլթեալ եր-
 կրբագեց անոր: Այս բարձրացումը կոչուեցաւ Խաչ-
 վերաց:

Ծ. Բրիտանոյ 614 թուականին, Պարսից Խոսրով Բ.
 թագաւորն Երուսաղէմը նուաճելով՝ Ս. Խաչը գերի տար-
 ուեցաւ: Հերակլ կայսրը, 627 Սեպտեմբեր 14ին, Ս.
 Խաչը վերադարձուց մեծ հանդէսով ու զնեյ տուաւ Ս.
 Երուսաղէմի մէջ: Այն ատեն սահմանուեցաւ Խաչվե-
 րացի՝ տօնը կատարել ամէն տարի:

Ձ. Հայերն ալ ընդունեցին այս տօնը: Իսահակ
 Զորախորեցի կաթուղիիօր երգեց Խաչի Շարականե-
 րը, ինչպէս՝ «Որ զանարատ բազուկս քո» եւ այլն:

Է. զարուն ընդունուած է Ս. Աստուածածնի վերա-
 փոխման տօնը:

Ձ. Խաչվերացի արարողութիւնն իրիկուան ժամեր-
 դութեան ատեն կը կատարուի: Եպիսկոպոսը կամ քա-
 հանաներէն երիցագոյնը՝ զգետաւորուած, քահանանե-
 րը շուրջառով ու զպիւրները շապիկներով, Ս. Խաչով ու

Ս. Աւետարանով, վառ մոմերով թափոր կ'ելլէ: Տա-
ճարին չորս կողմը բարձրացնելով Սաչը՝ կ'օրհնէ աշ-
խարհիս չորս կողմերը, եկեղեցական պաշտօնեաները,
ժողովուրդը, վանքերն ու բոլոր բարեպաշտական ու
մարդասիրական հաստատութիւնները:

Տ. Խաչվերացի սօնը ի՞նչ բանի յիշատակ է: — Գ. Ե՞րբ հաս-
տատուեցաւ այս սօնը: — 10. Ո՞ր Կաթողիկոսին օրով այս սօնը
ընդունած է մեր եկեղեցին: — 11. Ի՞նչպէս կը սօնենք Խաչվերացը:

5. ԴԱՍ. — ԽԱՉԻ ՏՕՆԵՐ (Շար.)

12. Գիւտ խաչ. — Այս սօնը կը կատարուի ի յի-
շատակ Հեղինէ թագուհիին Ս. Երուսաղէմի մէջ՝ Ս.
Սաչը գանելուն: Ս. Սաչը գրուեցաւ Ս. Յարութիւն
տաճարին մէջ և սահմանուեցաւ ամէն տարի տօն կա-
տարել, Սաչվերացի եօթներորդ կիրակին:

13. Առեւում Ս. Խաչի. — ՅՅ)ին, Գողգոթային դէպի
Ձիթենիներու լեռը, երկնքի վրայ կ'երևի Ս. Սաչը,
նոյն սքանչելի երեւումը կը տեսէ քանի մը ժամ: Երու-
սաղէմի կիւրեղ Եպիսկոպոսը այն ատեն Ս. Սաչի պատ-
մութիւնը կը գրէ ու կը գրէ՛է Կոստանդ կայսրին:

Ս. Սաչի երեւումը կը կատարուի Զատիկի Ե. կիրակին:

14. Վարագայ Ս. Խաչ. — Ս. Հռիփսիմեան կոյսե-
րէն ոմանք ընակեցան Վարագայ լեռն, ուր հալածանքի
երկիւղէն թողած էին Կենաց Փայտի՝ Ս. Սաչին՝ մէկ
կտորը: Թողիկ անուն ձգնաւորն, որ Վարագայ լեռան
գաղաթը կ'ապրէր, տեսիլքին մէջ տեսաւ որ տամներ-
կու լուսեղէն սիւնով տաճար մը շինուեր է լեռան քա-
րաժայռին ծայրն, ու մէջտեղն ալ Ս. Սաչի նշանը որ
յանկարծ բարձրանալով՝ կ'երթայ տաճարին սեղանը:

2-29-71

4529-72

1002 8708

ձգնաւորն եկեղեցի կը մտնէ ու հաւատացեալ ժողո-
վուրդն անոր հետ կ'երկրպագէ Ս. Սաչին:

15. Այն ատեն (653 թուականին) Ներսէս Գ. Շինող
Կաթողիկոսը Սաչափայտի մէկ մասին այս հրաշալի
յայտնութիւնը լսելով՝ կ'որոշէ տարուէ տարի տօն կա-
տարել, ու ինք՝ Ներսէս՝ առաջին անգամ կ'երգէ «Նշա-
նաւ ամենայաղթ Սաչիդ քո Բրիտանոս» շարականը:

16. Վարագայ Ս. Սաչի Տօնը Սաչվերացի Տօնէն
տանընդինգ օր ետքը եկող կիրակին կը կատարուի, և
մեր եկեղեցիին միայն յատուկ է:

12. Ի՞նչ բանի յիշատակ է Գիւտ Սաչի Տօնը: — 13. Երեւան
Սաչի Տօնը ի՞նչ կը յիշեցնէ: Ո՞վ գրեց Ս. Սաչի Երեւան պատմու-
թիւնը: — 14. Վարագայ Սաչի Տօնին վրայ ի՞նչ աւանդութիւն
կայ: — 15. Ո՞ր Կաթողիկոսին օրով եղած է այդ տեսիլք կամ
յայտնութիւնը, ո՞ր բուականին: Ի՞նչ բարեպաշտութիւն
Գ. Շինող: — 16. Ե՞րբ կը կատարուի Սաչի Տօնը:

6. ԴԱՍ. — ՀԱՅՏԵՐ ԺԲ. Մ. ՄԱՐՏՅԱՆ

13. Արեւմեան ազգեր. — Սրբաբան Ս. Մարտիոսը
ԺԱ. դարէն սկսեալ դէպի Երեւան կ'ապրէր և իր
ժողովուրդները, որոնց հետ յարաբերութիւն ունեցան
Փոքր Ասիոյ կողմի (Կիլիկիոյ) Հայերը: Այս բանին Արե-
ւելեան Հայերը կը հակառակէին:

18. Սսի Գ. ժողովը. — Յովհաննէս է. Կաթողի-
կոսին յաջորդած է Կոստանդին Ա. (1220—1268): Այս
Կաթողիկոսին ու Անտիոքի Պատրիարքին միջեւ Աթո-
ռի գլխաւորութեան նկատմամբ վէճ մը ծագեցաւ: Սա-
չակիրներու ատեն, Լատիններն Անտիոքի մէջ պատրիար-
քութիւն մը հաստատած էին, և որովհետեւ ի սկզբան
Կիլիկիա Անտիոքի պատրիարքութեան կը վերաբերէր,



Անտիոքի Պատրիարքն իր իրաւաստքիւնը Հայոց Կաթողիկոսին վրայ ալ ընդարձակել ուզեց. բայց չյաջողեցաւ :

Նոյն միջոցին (1243), քանի մը եկեղեցական խնդիրներու համար, Սաի մէջ ժողով գումարեցին :

19. Կոստանդին Բ. — Լեւոն արեւմտեաններուն շատ յարած էր. այս նպատակաւ, 1307ին, Սիւ դարձեալ ժողով գումարուեցաւ որուն ներկայ գտնուեցան նորընտիր Կոստանդին Բ. Կաթողիկոսը, Մետրապոլիտներ, Եպիսկոպոսներ, Վանահայր վարդապետներ եւայլն : Ժողովը կրօնական քանի մը որոշումներ տուաւ զոր մերժեցին Արեւելեան Հայերը : Եւ որովհետեւ ժողովին որոշումներուն գործադրութիւնը կը պահանջուէր, մեծամեծ շփոթութիւններ ծագեցան :

17. Արեւսեան Լասին ազգեր ինչո՞ւ կուզային Արեւելք, ո՞ր դարուն սկսաւ Խաչակրութիւնը : Ի՞նչ բանի կը հակառակէին Արեւելեան Հայերը : — 18. Կոստանդին Ա. ո՞ր Կարուղիկոսին յաջորդեց : Ի՞նչ խնդիր կար Կոստանդինի օրով : Ի՞նչ թել է իրաւաստքիւն : Ե՞րբ գումարուեցաւ Սիսի ժողովը : — 19. Ի՞նչ խնդիրի համար նոր ժողով եղաւ Սիսի մէջ : Ինչո՞ւ Եփորոսիւններ ծագեցան :

7. ԴԱՍ. — ՀԱՅԵՐԸ ԺԳ.—ԺԵ. ԴԱՐԵՐՈՒՆ

20. Ունիքորներ. — Այս դառն շփոթութեանց միջոցին, Յովհաննէս ԻԲ. Պապին կողմէ Դոմինիկեան կարգէն Բարթուղիմէոս Բոլոնիացին, իբրեւ Մարաղա քաղքին եպիսկոպոս, Ատրպա տական զրկուեցաւ : Բարթուղիմէոս յաջողեցաւ իրեն աշակերտներ ունենալ, որոնց մէկն էր Յովհաննէս Բոնեցիս, ու կազմել միաբանութիւն մը որ կոչուեցաւ Ունիքորներ կամ Միաբանող եղբայրներ : Այս միաբանութիւնը քիչ ատենէն զանազան տեղեր, մինչեւ իսկ Թաթարիստանի ու Խրիմի Հայերուն

մէջ, վանքեր ու եկեղեցիներ շինեց, և Թէոդոսիա քաղաքը վարժարան մը բացաւ : Գրէթէ երեք դարու չափան կողմերը Հռովմէական եկեղեցիին յարողներուն քաղաքիչներն այս միաբանութենէն էին :

21. Որոսեցիս ու Տաքեւացիս. — 1. Անոնց հաւատածաւելութեան մեծ արգելք եղան Յովհան Որոսեցիս ու մանաւանդ Գրիգոր Տաթեւացի : Յակոբ Բ. Կաթողիկոսը, Ունիթորներուն կողմը յարած ըլլալուն համար, աթոռէն ձգուեցաւ :

2. Յովհան Որոսեցիս Որոսն գաւառի Վաղանդն գեղը ծնած է, Իւանէի որդին էր, աշակերտ Եսայի Նչեցւոյն : Նչեցիս(*) գրած է շատ գիրքեր :

3. Գրիգոր Տաթեւացիին հայրը Արձէչցի էր, բայց ինք ծնաւ Վայոց Ձոր, 1340ին . Տաթեւացի կոչուեցաւ երկար ատեն Սիւնեաց Տաթեւ վանքը բնակելուն համար : Որոսեցիսին մահէն ետքը, անմիջապէս ուսուցիչ ու վարդապետ կարգուեցաւ Տաթեւացին, և ո՛չ մէկը իրմէ աւելի յաջողեցաւ Ունիթորներու յարձակումներուն դիմադրել :

4. Տաթեւացին գրած է «Հարցմանց-գիրք» կամ «Հասոր-հարցմանց» կոչուածները : Տաթեւացին իր բազմաշխատ կեանքը կնքեց 1411ին, գրեթէ 71 տարեկան :

20. Ի՞նչ թել է Ունիքոր : Ո՞վ դրկեց Ունիքորները : Մինչեւ ո՞ր արածուեցան եւ ի՞նչ բրին Ունիքոր կոչուած կրօնականները : — 21. — 1. Ի՞նչ բանի դեմ մտառուեցան Որոսեցի Յովհան եւ Տաքեւացի Գրիգոր : 2. Ո՞վ է Յովհան Որոսեցիս : 3. Ո՞ր ցեղէ սերած է Տաքեւացիս : Ի՞նչ գրած է Տաքեւացիս : Ինչո՞ւ Յակոբ Կարուղիկոսը արձուէ վար առնուեցաւ :

ԱՄՓՈՓՈՒՄ ԻՆՆԵՐՈՐԳ ԱՄՍՈՒԱՆ (1—21)

Ներսէս Շնորհալի. Կրտսեր եղբայրն է Գրիգոր Գ. Պաշլուանիին . Հայ եկեղեցիին դաւանութեան վրայ գրեց Կիր Մանուէլ կայսրին, որ եկեղեցական ժողովի մէջ քննութեան առնելով խնդիր՝ Թէորիսնոս իմաստ

(*) Նիչ, բաղաբ Անդրիովկասի Հարաւակողմը .

տասէրին ձեռքով պատասխան տուաւ: Բայց 1173ին Շնորհալին վախճա-
նեցաւ: Իրեն յաջորդեց Գրիգոր Դ. Տղայ, որ Հռոմկլայի մէջ ժողով գու-
մարեց:

Ս. Ներսէս Համբոնացի այ ներկայ էր այդ ժողովին եւ հաստա-
տեց թէ Հայ եկեղեցիին նկատմամբ եղած տարաձայնութիւնը անհիմ է:
Ժողովին որոշումը նամակով հաղորդուեցաւ Կիր Մանուէլ կայսրին, բայց
պատգամաւորները ղեռ Պոլիս չհասած՝ կայսրը մեռաւ:

Շնորհալի եւ Համբոնացի Հայ եկեղեցիին նշանաւոր Վարդապետնե-
րէն են. գրած են գեղեցիկ Շարահաններ, ինչպէս Առաւօտ շուշայ, եւ այլն:
Խաչվերացի եւ Գիւս Խաչի Տօները յիշատակ են, առաջինը Ս. Հեղի-
նէի օրով Երուսաղէմի մէջ կատարուած հանդէսին, երկրորդը Հերակ կայս-
րին՝ Խաչը Պարսիկներէն ետ առնելով՝ Երուսաղէմի մէջ բարձրացնելուն:
Խաչվերացի արարողութեան ատեն կը կատարուի Թափոր եւ անդա-
տան. (Պատմեցէք ինչպէս):

Խաչի երեսման Տօնը յիշատակ է՝ 351 թիւին՝ Գողգոթայէն դէպի Ձի-
Սենիներու լեռը երկկնքի վրայ Խաչի նշան տեսնուելուն, եւ կը տօնուի
Ջատիկ Ե. Կիրակի օրը:

Վարագայ Խաչի Տօնը մեր եկեղեցիին յատուկ է, եւ կը յիշեցնէ
Թողիկ անուն ճշմարտին տեսիլքն ու գիւտը, 653ին: Ներսէս Գ. Շինող
Կաթողիկոսը խաչավառի այս յայտնութեան համար գրեց շնորհագրու ա-
մենայազմ խաչից բո, Քրիստոս շարականը որ կ'երգուի նոյն Տօնին օրը:
Արեւմտեան ազգերը Խաչակրութեան համար դէպի Արեւելք կուգա-
յին, եւ Կիլիկիոյ Հայերն անոնց հետ յարաբերութեան մտած էին:

Սիւսի Կ. ժողովը գումարուեցաւ 1243ին, Հայոց կաթողիկոսութիւ-
նը Անտիոքի Լատին պատրիարքութենէն անկախ ըլլալը հռչակելու եւ ու-
րիշ ազգ-եկեղեցական խնդիրներու համար:

Կոստանդին Բ-ի օրով. 1307ին, Սիւսի մէջ ուրիշ ժողով մ'ալ գու-
մարուեցաւ, բայց Արեւելեան Հայերը նոյն ժողովին որոշումները չընդու-
նեցին եւ Հռոմէական եկեղեցիին չյարեցան:

Ունիթոմներ կամ Միաբանող Եղբայրները կը կազմեն կրօնական
միաբանութիւն մը, որուն նպատակն էր Լատին եկեղեցիին հետ միացնել
Հայերը:

Յովնան Որոսնեցի եւ Գրիգոր Տաբեւացի Հայրապետներն այս գա-
ղափին դէմ մարտուեցան, իսկ Յակոբ Բ. Կաթողիկոսը, որ միութեան կողմն
էր, աթոռէն ձգուեցաւ:

Այս երկու Վարդապետներն ալ նշանաւոր են եւ կը յիշատակուին Ե-
կեղեցիին մէջ, Առաքելոցի ատեն:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



1. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Քարտէսին վրայ նայելով՝ ըսէք թէ ո՞ր քաղաքներուն մօտէն
կ'անցնին Ալպեան լեռներն ու անոր ճիւղերը:

2. Եւրոպայի քարտէսին վրայ նայելով՝ ըսէք կարգով թէ Դանուբ
գետը ո՞ր քաղաքներուն մէջէն կամ բովէն կ'անցնի:

3. Շոգենաւ մը Լոնտոնէն Կ. Պոլիս երթալու համար ո՞ր ծովերէն եւ
ո՞ր նեղուցներէն անցնելու է:

4. Ամփոփ կերպով ըսէք ինչ որ գիտէք Անգղիոյ, Պելճիքայի եւ Հո-
լանտայի վրայ:

5. Որո՞նք են Գերմանիոյ սահմանները, Աւստրիոյ սահմանները, Ի-
տալիոյ սահմանները, Ի՞նչ գիտէք աս երկիրներուն վրայ:

6. Համր քարտէսի մը վրայ ցոյց տուէք Պալլաւնեան Պետութիւններն
ու անոնց մայրաքաղաքները:

7. Այրօրենի կարգով գրեցէք Եւրոպական Պետութեանց անուննե-
րը, Որո՞նք են Եւրոպական 21 Պետութեանց սահմանները:



2. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱ

(Կլիմա եւ արտադրութիւններ)

1. Մասնաւոր կլիմաներ. — Եւրոպայի կլիման ընդ-
հանրապէս բարեխառն է: Երեք տեսակ կլիմա կը տի-
րէ հոն.

Աշլանդեանի կլիմա, ամէնէն խոնաւն ու հաճելին,
կը տիրէ Արեւմտեան կողմը, Սկանտինաւեան թերակղզ-
գիէն մինչեւ Իբերեան ցամաքակղզին՝ յարակից երկիր-
ներով:

Միջերկրականի կլիմա, որ նախորդէն աւելի տաք
ու չոր է, և Միջերկրականի ծովեզերեայ երկիրներուն
յատուկ է:

Նեքցամաքային կլիմա, որ Ատլանդեանէն ու Մի-

ջերկրականէն հեռաւոր երկիրներու յատուկ է, Եւրոպայի կեդրոնն ու Արեւելքը: Այս կողմերուն օդը շատ ցուրտ է ձմեռը, շատ տաք՝ ամառը:

2. Հանգային արտադրութիւններ. — Եւրոպայի հողը ոսկիի ու արծաթի հանք շատ չունի, բայց բաւական մեծ քանակով ունի երկաթի ու հանքածոյխի բովեր. ասոնք ճարտարարուեստի համար շատ կարեւոր են:

3. Բոյսեր. — Եւրոպայի կլիման շատ կը նպաստէ օգտակար բոյսերու աճումին: Ռուսիոյ ընդարձակ դաշտերէն և Ֆրանսոյէն կ'ելլէ առատ ցորեն: Հարաւային երկիրները կուտան խաղող, Հիւսիսային դաշտերը ծածկուած են կաղամախի (փեկոն), եղեւնի և մայրի անտառներով:

4. Կենդանիներ. — Եւրոպայի գրէթէ ա մէջ կողմերը ջնջուած են վնասակար կենդանիները: Բայց՝ ընդհակառակն՝ ընտանի կենդանիներ (ձի, եղ, ոչխար, եւն.) նշանաւոր են իրենց գեղեցկութեամբ, մանաւանդ Անգլիոյ և Ֆրանսոյի մէջ:

1. Ի՞նչպէս է Եւրոպայի ընդհանուր կլիման: Քանի՞ ցետակ մասնաւոր կլիմա կայ Եւրոպայի մէջ: — 2. Որո՞նք են հանգային արտադրութիւններուն գլխաւորները: — 3. Որո՞նք են բոյսերը: — 4. Կենդանիները՞:

3. ԳԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Ը. ԱՄՍՈՒԱՆ

- 5. Ծովեր ու ծովագրներ, — Եւրոպայի ծովերն են.
 1. Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսը՝ որուն մէջ է ձերմակ ծովը:
 2. Ատլանտեան Ովկիանոսը՝ որուն մասն է Հիւսիսային ծովը և Պալդիկ ծովը:
 3. Միջերկրական ծովը՝ որուն մասերն են Ադրիականը և Սեւ ծովը:
 4. Կասպից ծովը՝ որ աղի լիճ մ'է:

Եւրոպայի ծովերը քին վրայ կան Հիւսիսային հըրուանդանը, Սկանտինավեան ցամաքակղզին, Պօմնիի ծոցը, Եուրպանդի թերակղզին, Բրիտանական կղզիները, Իբերեան ցամաքակղզին, Ֆինիսթերի և Սուրբ Վիչենցիոսի հրուանդանները, Լիոնի և ձենուլայի ծոցերը, Պալէարեան կղզիները, Բորսիքա, Սարտէնիա, Իտալական ցամաքակղզին, Սիկիլիա կղզին, Պալքանեան ցամաքակղզին և Կրետէ կղզին:

6. Դաշեր ու լեռներ. — Արեւելեան կողմը հարթ դաշտագետիներ կը տարածուին, իսկ Արեւմտեան կողմը բարձր լեռներ կը կանգնին:

Մեծագոյն շղթան է Ալպեան լեռներու գօտին՝ որուն թեւերն են Ապենինեան լեռները: Դէպի Արեւելք՝ Քարբաղներն ու Պալքանները: Դէպի Արեւմուտք՝ Ֆրանսոյի լեռնաղոյտը և Պիւնէնեանները: Դէպի Հիւսիս՝ Սքանտինավեանները: Կովկաս և Ուրալ՝ Արեւելքի կողմէն սահմանագիծ կը կազմեն Ասիայի ու Եւրոպայի միջև:

7. Դեռեր. — Գլխաւոր գետերն են. Հիւսիս-Արեւմեան կողմը՝ Տվինա, Վիստուլա, Օտեր, Էլպա, Հուստո, Մէոզ, Դամիզ, Սէն, Լուառ, Կարօն, Դալո:

Հարաւ-Արեւելեան կողմը՝ Էլպա, Ռօն, Տիրերիա, Փօ, Դանուբ, Տնիերեր, Տօն, Վօլկա:

8. Կլիմա. — Ընդհանրապէս բարեխառն: Երեք տեսակ կլիմա՝ Ատլանտեան, Միջերկրական և Ներքաւաքային:

9. Արտադրութիւններ. — Երկաթ և հանքածուխ, արմաթ և խաղող, կաղամախ, եղեւին և մայր՝ Հարաւային լեռներուն վրայ:

Գրէթէ ամէն տեսակ ընտանի կենդանիներ կան Եւրոպայի մէջ, իսկ լաւագոյն ցեղերն ու սեռերը՝ մանաւանդ Անգլիա և Ֆրանսա ունին:

4. ԴԱՍ — ԱՍԻՈՑ ԵԶԵՐՔՆԵՐԸ

10. Ասիան գրէթէ չորս անգամ մեծ է Եւրոպայէն: Աշխարհի չինգ մասերէն ամէնէն ընդարձակն ու բազմամարդն է:

11. Սահմաններն են՝ Հիւսիսէն Սառուցեալ Ովկիանոսը. Արեւելքէն՝ Խաղաղականը. Հարաւէն՝ Հնդկաց Ովկիանոսը. Արեւմուտքէն՝ Կարմիր ծովը, Միջերկրականը, Սեւ ծովը, Կասպից ծովը, Ռուսա լեռները:

12. Ծով ու ծովեզերք. — Ա. Հիւսիսէն՝ Սառուցեալ Ովկիանոսը որ գրէթէ ամբողջ պատած է սառույցով: Բ. Արեւելքէն՝ ձաքունի Արֆիպեղազոսը և Թորոզուս ու Հայկան կղզիները: Աս կողմն են՝ Պեհրիկայի, Օխոցֆի, ձաքունի և Դեղիկն ու Չիևու ծովերը:

Գ. Հարաւէն՝ երեք մեծ թերակղզիներ. Հնդկաստան, Արաբիա: Աս կողմն են՝ Պենկայի ծոցը, Օւանի ծովը, Կարմիր ծովը և Մեյրան կղզին:

Դ. Միւեզի ցրանցքը (որ առաջ պարանոց էր) Ափրիկէն կը դատէ Ասիայէն: Շոգենաւները Միջերկրականէն կը մտնեն Կարմիր ծով և անկից ալ Հնդիկ Ովկիանոսը:

13. Ասիոյ մէկ մասը կը թրջեն Սեւ ծովն ու Միջերկրականը: Ասոնց միջեւ է Փոքր-Ասիան (Անատոլի):

10. Ո՞րչափ է Ասիայի մեծութիւնը: — 11. Որո՞՞նք են Ասիոյ սահմանները: — 12. Ըսէ՛ք ծովերը: — 13. Ո՞ր ծովեր կը թրջեն Անատոլին:

5. ԴԱՍ. — ԱՍԻՈՑ ԼԵՌՆԵՐ, ԳԱՇՏԵՐ, ԳԵՏԵՐ, ԼԻՃԵՐ

14. Լեռնադաշտ ու լեռ. — Աշխարհի ամէնէն բարձր լեռներն ու լեռնադաշտերը Ասիոյ մէջ են: Բաւիթի հո-

վիսեկն, որ Եւրոպայի Մոն-Պրանիկն չափ բարձր է, դէպի Արեւելք կ'երկննան երեք լեռնաշղթայ.

1. Հիւնարայա, որուն մասն է Կորիշակաւար (8840 մէդր, աշխարհի ամէնէն բարձր լեռը): 2. Թիան-Շան կամ Երկնայիկ լեռները որուն շարունակութիւնն են Աշրայի լեռները: 3. Բուան-Լիւն լեռները:

Բուան-Լիւնի և Հիմալայայի մէջտեղն է Թիպեթի լեռնադաշտը, Բուան-Լիւնի և Թիան-Շանի մէջտեղն է Մոնկոլիայի լեռնադաշտն ու Կոպիի անապատը:

15. Դաշտեր. — Ասիոյ Հիւսիսակողմն է Միպերիանի ընդարձակ դաշտը: Չիևու դաշտերը կը տարածուին Կոպիի անապատին և Հնդկա-Չինու մէջտեղը:

16. Գետեր ու լիճեր. — Ասիոյ գլխաւոր գետերը կը ըզլին Կեդրոնի լեռնադաշտերէն (Բամիր և Թլայթթ) և կ'երթան Արեւելք ու Հարաւ:

Այս գետերն են. Ամուր, որ կը թափի Օխոցքի ծովը: Դեղիկն գետ՝ որ Դեղին ծովը կը թափի: Կասպոս գետ՝ որ 5,000 քիլոմէդր երկայն է և Չինու ծովը կը թափի: Պրահմարուքրու և Գանգես՝ որ Պէնկալի ծոցը կը թափի: Վերջապէս Սեկս կամ Ինդոս՝ որ Օմանի ծովը կը թափի:

Ասիան ունի մեծ լիճեր. գլխաւորներն են՝ Արալի լիճը՝ Արեւելքի կողմը և Պայթալի լիճը՝ Հիւսիսի կողմը:

14. Որո՞՞նք են Ասիոյ մեծ լեռները: — 15. Դաշտերը: — 16. Գետերը: Լիճերը:

6. ԴԱՍ. — ԱՍԻՈՑ ԿԼԻՄԱՆ ԵՒ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

17. Կլիմա. Միպերիան որ Բեւեռին մօտ է, սաստիկ ցուրտ է:

Ասիոյ կեդրոնական լեռներուն մէջ ձմեռը սաստիկ ցուրտ կ'ընէ, ամառն ալ սաստիկ տաք:

Բարձր լեռնադաշտերուն կլիման չոր ու անրեր է. նոյնպէս են նաեւ Իրանի հովիտներն ու Արաբիան:

Հնդկաչինը և Հնդկաստանը շատ տաք ու խոնաւ են. աս կողմերու կլիման վատաւող չ է:

18. Հանգայի արտադրութիւններ. — Ասիոյ հողը հարուստ հանքեր ունի՝ երկաթի, ոսկիի, արծաթի և պղինձի. ունի նաեւ հանքածուխ:

19. Բոյսեր. — Սիպերիայի կողմերը ընդարձակ անտառներ կան. կեդրոնն ու Արեւելքը կայ արօտաշատ երկիր մը. վերջապէս, Սիպերիայի հարաւակողմը արգաւանդ հողեր:

Չինու մէջ կը մշակուին՝ բրինձ, թէյ, թիփենի:

Հնդկաստան և Հնդկաչին, որ բարեբեր են, կ'արտադրեն՝ կակայենի (խաւոյի ծառ. պտուղը կ'ըսուի նաեւ հնդկիկ նուշ որմէ կը հանեն չոխոյս), աղամաթղենի, հնդկեղէգ, լեզակենի որուն արտադրած հիւթը կապոյտ ներկ մ'է, նաեւ խաշխաշ որմէ կը հանեն ափիօնը:

Արաբիան ունի ընտիր խահլէ որուն ծառն է կոպիենի:

20. Կենդանիներ. — Սիպերիայի անտառներուն մէջ կան կենդանիներ որոնց մուշտակը յարգի է. կապոյտ աղուէս, աքիս, արջ: Ուղտը Արաբիայի ու Պարսկաստանի մէջ կը գործածուի բեռ կրելու:

Ասիայի Հարաւակողմը կայ փիղ, ունգեղջիւր, վագր, յովազ և թունաւոր օձեր:

17. Ի՞նչպէս է Ասիոյ կլիման: Ո՞ր կողմերը ցուրտ է եւ ո՞ր կողմերը սառ: — **18.** Ուր՞եք են հանգայի արտադրութիւնները: — **19.** Բոյսերը: — **20.** Կենդանիները:

7. ԳՍՍ. — ԱՍՈՑ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԸ ՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

21. Ժողովուրդ. — Ռուսիա ունի 850 միլիոն բնակիչ որոնք երկու ցեղի կը պատկանին. 1. Դեղին կամ

մոնկոլեան որ Արեւելքի կողմը (Չինաստան, Ճարն, Էւաչն) կը բնակի և 3. Ճերմակ ցեղը որ կը բնակի Հնդկաստան և Ասիոյ Արեւմտեան մասերը:

22. Ասիական Ռուսիա. — Ռուսիան Ասիոյ մէջ ունի 15 միլիոն բնակիչ: 1. Սիպերիա (գլխ. քաղաք Իրքոզ): 2. Կովկասեան նահանգները կամ Անդրկովկաս (գլխ. քաղաք Թիֆլիզ): 3. Արեւմտեան Թուրքեստան (գլխ. քաղաք Թաշքեն): Խիսլա և Պոխարա, որոնք Թուրքեստանի Արեւելեան մասը կը կազմեն և ինքնօրէն են Ռուսիոյ գերիշխանութեան տակ:

23. Ասիական Թուրքիա. — Տաճկական Ասիան է Անսոյուր կամ Փոքր-Ասիա, որուն գլխաւոր քաղաքներն են Պրուսա, Իզմիր, Գօլիս, Ասանա, Հալեպ, Պէյրուք, Շամ, Գասթեմուրէ, Տրապիզոն, Կարիւն, Էնկիլարիս, Մեւսուս, Խարքեղ, Բաղէշ, Տիարպէֆիր, Վան, Մուսուղ, Պադսուս, Պասրա, Հիւսագ, Մեֆե, Մեքիւնէ, Երուսաղեմ: Օսմանեան Կայսրութեան մաս կը կազմէ Արաբիա, որ կը բաղկանայ Հիւսագի և Եֆեկի նահանգներէն:

24. Պարսկաստան և Աֆղանիստան. — Իրանի լեռնադաշտին մէջ են. Պարսիստան (մայրաք. Թեհրան) և Աֆղանիստան (մայրաք. Բեսպուր):

Պէրսիստանի Աֆղանիստանի սահմանակից է և Անդգիայի պաշտպանութեան տակ: Մայրաքաղաք՝ Բեքադ:

Պիրենեան առանձին թագաւորութիւն է, Անդգիոյ իշխանութեան տակ: Սիւնկաբուրի նաւահանգիստն ալ Անդգիոյ ստացուածքն է:

25. Հնդկաստան. — 200 միլիոնէ աւելի բնակիչ ունի, և Անդգիոյ ստացուածքն է: Մայրաքաղաքն է Կալկաթա, Հնդկաչինի Հարաւակողմը:

26. Ֆրանսական Հնդկաստան. — Կը պարունարէ՝ 1. Գոչինէլին (մայրաք. Սայլոն) և Թոնիֆին (մայրաք. Հա-

նոյի) : 2. Գաւկոն և Աննաւ (մայրաք. Հիւն) Ֆրանսա-
յի պաշտպանութեան տակ :

27. Սիւս. — Սիւս անկախ Պետութիւն է Հընդ-
կաշինու մէջ : Մայրաք. Պակիս :

28. Չինաստան. — Չինական կայսրութիւնը (400
միլիոն բնակիչով) Եւրոպային ալ մեծ է տարածու-
թեամբ : Մայրաքաղաքն է Բեյիին, գլխ. քաղաքներն
են Բանդուն և Շանկի-Հայ :

29. Ճարուն. — Ճարունի կայսրութիւնը չորս կղզի-
ներէ կը բաղկանայ որոնց մեծագոյնն է Նիքոն : Մայ-
րաքաղաքն է Թօֆիս :

21—29. Որո՞ցք են Ասիական Պետութիւնները եւ անոնց մայ-
րաքաղաքները :

8. ԴԱՍ. — ՀՐԱՆԱՆՊԵՐ

1. Համր բարտէսի մը վրայ ցոյց տուէր Ռուսիոյ սահմաններն եւ ը-
սէք թէ ինչ գիտէք անոր վրայ : — 2. Համր բարտէսի մը վրայ ցոյց տը-
ւէք իրերեան թերակղզին եւ նշանակեցէք երկիրներն ու կարեւոր բաղաբ-
ները : — 3. Ո՞ր եւ ո՞ր երկրի մէջ են սա քաղաքները. Ստոքհոլմ, Մի-
լան, Պուտրէշթ, Պարսէլոնա, Լիզպոն, Պրիւքսէլ, Էտիպուրկ, Լիվը-
բուր, Վիէննա, Պէնն : — 4. Եւրոպական ո՞ր տէրութիւնները կը թրջեն
Ատլանտեան Ովկիանոսն ու անոր յարակից ծովերը : — 5. Ո՞ր երկիրներ
Միջերկրականի եւ անոր յարակից ծովերուն եզերքն են : — 6. Եւրո-
պայի մէջ կան երկիրներ որ ծով չունին, եւ որոնք են :

ՎԵՇԱՊԵՏԱԿԱՆ ՏԻՏՂՈՍՆԵՐ


Եւրոպայի կառավարութեանց Պետեր կ'ըսուին՝

1. Սուլթան, որ է Օսմանեան Վեհապետը :
2. Կայսր, ինչպէս՝ Գերմանիոյ, Աւստրիոյ, եւայլն :
3. Չար, որ է Ռուսիոյ Վեհապետը :
4. Թագաւոր, ինչպէս՝ Իտալիայի, Սպանիայի, Յունաստանի :
5. Իեխան, » Պուլկարիա, Պարսիք, եւայլն :
6. Գուխ, » Պատ, Հէս, Լիւքսէմպուրկ :
7. Նախագահ, » Ֆրանսայի, Անգղիայի, եւայլն :
8. Կայսրուհի, » Գերմանիայի, Անգղիայի, եւայլն :
9. Թագուհի, » Հոլանտա, Սպանիա, Իտալիա, Ռուսիայի :
10. Եւրոպայի մէջ իշխանական տիրոջներն են նաև Մարֆիզ, Գունս,
Գահաժառանգ, Արխիւզակ, Իշխանագն, եւայլն :

Թ Ո Ւ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. ԴԱՍ. — ԾԱԻԱԼԻ ԶԱՓԵՐԸ

1. Ի՞նչ է ծաւալը. — Առարկայի մը բռնած տեղը իր
ծաւալն է : Մեր տեսած բոլոր առարկաները
ո՞րեւէ երկայնութիւն, շայնութիւն և բարձ-
րութիւն ունին :



Պատկ. 5
Խորանարդ

2. Խորանարդ մէդրը. — Ծաւալները
չափելու համար գլխաւորապէս խորանարդ
մէդրը կը գործածուի : Խորանարդ մէդրը
որ համաուտ կերպով կը գրուի (ԽՄ.) կը
նմանի մատուկի մը որուն վեց երեւններն իրարու հա-
ւասար են և անկիւնները մէկմէկ մէդր երկայն են :

1. Ի՞նչ է ծաւալը : — 2. Ծաւալները ինչո՞վ կը չափուին :

Վարժութիւններ. — 1. Հող մը որ 7½ կալ մակերեսոյժ ունէր,
ծախուեցաւ բառ. մէդրը 24,5 դր. ըսէք թէ այս հողը բանի դր. արժեց :

2. ԴԱՍ. — ԾԱԻԱԼԻ ԶԱՓԵՐԸ (Շար.)

3. Խոր. մէդրին բազմապատկեցները.

Խոր. սասնակեղը (ԽՏՏ.)	կ'արժէ հազար	խոր. մէդր	
Խոր. հարիւրակեղը (ԽՀՏ.)	»	1 միլիոն	»
Խոր. հազարակեղը (ԽՀՀՏ.)	»	1 երկիլիոն	»
Խոր. բիւրակեղը (ԽԲՏ.)	»	1 երեքիլիոն	»

4. Խոր. մէդրին ստորաբաժանումները.

Խոր. սանտրոյակեղը (Խստր.) կ'արժէ մէկ հազարորդ
խոր. մէդր :

Խոր. հարիւրորդակեղը (Խհր.) կ'արժէ մէկ միլիոնե-
նորդ խոր. մէդր :

Խոր. հազարորդակեղը (Խհհր.) կ'արժէ մէկ երկիլիո-
նորդ խոր. մէդր :

3. Որո՞նք են խոր. մեղքին բազմապատկաները: — 4. Ստորաբաժանումնե՞ր որոնք են:

Վարժարիւններ. 2. Գիւղացի մը հաշուեց որ իր հողերէն իւրաքանչիւր տէօնիւմին համար Թէ տուրք, Թէ ծախք 125.5 զրշ. կ'երթայ, արդ այս գիւղացին ունի 6 կտոր հող որոնց ամէն մէկը (իւրաքանչիւրը) 8,25 տէօնիւմ կուգայ. ամբողջ հողերուն որչափ տուրք կը վճարէ եւ ծախք կ'ընէ:

3. ԴԱՍ. — ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐԸ

5. Պարունակութեան չափեր. — Հեղուկներու և հացահատիկներու համար մասնաւոր չափեր կան. ասոնք կը կոչուին պարունակութեան չափեր:

6. Լիդր. — Պարունակութեան գլխաւոր չափն է շիրդը(*), որ մէկ տասնորդամէղր խորանարդ է:

7. Լիդրին բազմապատկաները.

- Տասնալիդր (ՏԼ) որ կ'արժէ 10 լիդր:
- Հարիւրալիդր (ՀԼ) որ « 100 »
- Հազարալիդր (ՀՀԼ) որ « 1000 »

8. Լիդրին ստորաբաժանումները.

- Տասնորդալիդր (ԴԼ) որ կ'արժէ 0,1 լիդր:
- Հարիւրորդալիդր (ՀԴԼ) որ « 0,01 »
- Հազարորդալիդր (ՀՀԴԼ) որ « 0,001 »

9. Պարունակութեան չափերը ցուցնող քիւերն ի՞նչպէս գրելու եւ ի՞նչպէս կարդալու է. — Այս թիւերն ալ տասնորդականներու պէս կը գրուին ու կը կարդացուին: Օրինակ՝ 31 լիդր 25 հարիւրորդալիդր կը գրուի 31,25:

5. Ի՞նչ է պարունակութեան չափ բոււածը: — 6. Ո՞րն է պարունակութեան չափին գլխաւոր միութիւնը: — 7. Որո՞նք են լիդրին բազմապատկաները: — 8. Ստորաբաժանումնե՞ր: — 9. Ի՞նչպէս կարդալու է եւ ի՞նչպէս գրելու է պարունակութեան չափ ցուցնող քիւերն:

(*) Գէտը չէ շփոթել շիրդը (պարունակութեան չափ) հայերէն լիտրառին հետ (ժանրութեան չափ, 6 օխա) Տանկ. պարսկան.

4. ԴԱՍ. — ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐԸ (Շար.)

10. Հեղուկներու չափեր. — Կաթը, ձէթը, նաւթը (կաղ եաղը), օղին, գինին և ուրիշ հեղուկներ կը ծախուին մասնաւոր չափերով: Այս չափերը շինուած են ընդհանրապէս թիթեղէ, և այլեւայլ մեծութիւն ունին:

Թուրքիոյ մէջ, օրինակ՝ Պոլիս, շատ կը գործածուին լիդրը և իր ստորաբաժանումները, իսկ գաւառներու մէջ օխանոց ու տրամնոց չափերը կը գործածուին:

10. Հեղուկները ինչո՞վ կը չափուին:

5. ԴԱՍ. — ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐԸ (Շար.)

11. Հեղուկներու չափերը. — Մէկ լիդրը հաւասար է մէկ քիլոկրամի (կամ քիլոյի): Այսպէս, եթէ մարդ մը մէկ քիլօ կաթ ուղէ գնել, կաթնալաճառը մէկ լիդրնոց ամանի մէջ կը լեցնէ կուտայ: Այսպէս կայ կիս շիրդ, քառորդ, ութերորդ շիրդ, եւ այլն:

12. Իսկ Թուրքիոյ մէջ, հոն ուր լիդր չի գործածուիր, տրամներ կը գործածուին: Այսպէս շուկայէն կարելի է գնել 50 տրամ ձէթ, 100 տրամ նաւթ (կաղ եաղը), 25 տրամ օղի, 200 տրամ գինի: Այս տրամնոց չափերն ալ շինուած են թիթեղէ:

11. Մէկ լիդր ո՞րչափ ծանր է: — 12. Թուրքիոյ մէջ, ամէն սեղ, լիդր կը գործածուին:

Վարժարիւններ. — 3. Մարդ մը ամէն օր սովորութիւն ունի կէս լիդր կամ գնելու. ամիսը լինելու յետոյ բանի զրշ. պիտի վճարէ կրթնաւաճառին, եթէ մէկ լիդր կամը կ'արժէ 2,25 զրշ. — 4. Տասնէր մը պատուիրած է իր ծառային որ օրը 150 տրամ նաւթ գնէ իր տանը համար, ամիսէ մը բանի զրշ. պիտի վճարէ եթէ 100 տրամ նաւթը 0,75 զրշ. արժէ:

6. ԴԱՍ. — ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐԸ (Շար.)

13. Հացաբոյսերու չափերը. — Մեր մէջ ցորենը, գարին և ուրիշ հացաբոյսերը չափելու համար, գրէթէ ամէն գաւառ իրեն յատուկ չափեր ունի, որոնք քիչ կամ շատ իրարմէ կը տարբերին. բայց ամէնէն աւելի կը գործածուին հետեւեալ չափերը. ֆիլէ, շիկիկ, գուրու: 1 ֆիլէն կ'արժէ 4 շիկիկ: 1 շիկիկ կ'արժէ 4 գուրու:

13. Հացաբոյսերը ինչո՞վ կը չափուին: Ամէնէն աւելի ո՞ր չափերը կը գործածուին հացաբոյս չափերու համար (գրիւ, կոս, տուփ):

Վարժուիլներ. — 5. Գեղացի մը իր արտերէն 210 շիկիկ ցորեն ստացաւ: 5 քիլէ փոխ առած էր տուաւ եւ մնացածը ծախեց քիլէն 18,5 զրշ.ի. քանի զրշ. առաւ. — 6. Կոստատի վաճառական մը մէկ զուժուն 2,5 զրշ.ի սակարկեց եւ գնեց 58 քիլէ կոստատ. կրննք ըսել թէ քանի զրշ. վճարեց. — 7. Գինեպան մը ամէն օր 50 տրամնոցով մը գինի կը զրկէ իր մէկ յաճախորդին. երեք ամիս յետոյ հաշիւ կը տեսնեն եւ օխան 3,25 զրշ.ի հաշիւով ստակը կ'առնէ. ըսէք թէ քանի զրշ. առաւ (մէկ օխանոցը 8 հատ 50 տրամնոց կ'արժէ). — 8. Գիւղացի մը իր ցորենը զուժուով չափեց եւ գտաւ 875 զուժու. քանի քիլէ ըսել է:

7. ԴԱՍ. — ԹՂԹԻ ԶԱՓԵՐԸ

14. Թղթի չափերը. — Գրելու համար գործածուած թուղթը մամուաւոր չափերով ծրարներու մէջ դրուած է և այդ հաշիւով կը ծախուի: Այսպէս, 5 քերթը կը կազմէ 1 սրակ: 20 սրակը կը կազմէ 1 տրցակ (1/4 քօփ): 4 տրցակը կը կազմէ 1 ծրար (քօփ): Ուրիմն, 1 ծրար թուղթը կը պարունակէ 4 տրցակ, կամ 80 սրակ, կամ 400 թերթ թուղթ:

15. Հասի չափերը. — Վաճառականութեան մէջ շատ մը պզտիկ առարկաներ կան որ փոխանակ հատիկ հատիկ ծախուելու կամ հատիկ հատիկ դրուելու, կապոցներով կը դրուին ու այնպէս կապոցներով կը ծախուին: Այսպէս 12 հատ մատիտ կամ գրիչ մէկտեղ բերելով մէկ կապ կը շինեն որուն տուգինս կ'ըսուի: Կամ 12 հատ

տուգինս գրչածայր մէկ տուփի մէջ լեցնելով մէկ կրոցա կը շինեն: Այսպէս մէկ տուգինան կ'արժէ 12 հատ, իսկ մէկ կրոցան կ'արժէ 12 տուգինս:

14. Գրելու թուղթ ի՞նչ չափով ու ձեւով կը ծախուի: — 15. Ի՞նչ բաներ հասով կը ծախուին:

8. ԴԱՍ. — ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ԶԱՓԵՐԸ

16. Կրամը. — Ծանրութիւնը չափելու համար ամէնէն աւելի կը գործածուի կրամը: Կրամը մէկ խոր. հարիւրորդամէջը զուտ ջրի ծանրութիւնն է:

17. Կրամին բազմապատիկները. — Աւասիկ կրամին բազմապատիկները.

Տամակրամ (Տկ.) որ կ'արժէ 10 կրամ:	
Հարիւրակրամ (Հկ.) որ » » 100 »	
Հազարակրամ (Հզկ.) որ » » 1000 »	
Քիւրակրամ (Քկ.) որ » » 10000 » կամ 10 քիլօ:	
Մեկրակրամ կենդիւնար (Մկ.) որ կ'արժէ 100,000 կրամ կամ 100 քիլօկրամ:	

Տակրուսչափ (Տկւ.) (թօնօ) որ կ'արժէ 1000000 կրամ կամ 1000 քիլօ:

18. Կրամին ստորաբաժանումները.

Տասնորդակրամ (տրդ.) որ կ'արժէ 0կր.,1:	
Հարիւրորդակրամ (հրդ.) որ » » 0կր.,01:	
Հազարորդակրամ (հռդ.) որ » » 0կր.,001:	

16. Ի՞նչ է կրամը: Ո՞րչափ ծանրութիւն ունի: — 17. Որո՞նք են կրամին բազմապատիկները: — 18. Որո՞նք են կրամին ստորաբաժանումները:

Վարժուիլներ. — 9. 8 ծրար թուղթ գնեցի, ծրարը 68 զրշ.ի եւ պրակով ծախեցի պրակը 0,75 զրշ.ի. վաստկեցնոյ բան մը թէ ոչ, եւ ինչ վաստկեցայ. — 10. 1 հազարակրամ (քիլօ) պանիրը կ'արժէ 12 զրուշ. քանի զրշ.ի կրնանք գնել 100 կրամը:

9. ԴԱՍ. — ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐԸ (Շար.)

19. Տրամբ. — Թուրքիոյ մէջ ծանրութիւնները կը չափուին տրամբով(*) և օխայով: Մեր տրամբը ֆրանսացիներու կրամէն ծանր է, անոր երեք անգամէն աւելի է: Շուկայէն տրամով բան կարելի է գնել. — թանկագին մետաղները, մետաքսը, թանկագին քարերը տրամով կը կշռուին: Այսպէս, եթէ արծաթէ մատանի մը 3,5 տրամ ծանր ըլլայ և եթէ մէկ տրամ արծաթը երկու զըշարժէ, ըսել է թէ մատանին կ'արժէ 3,5 x 2 = 7 զըշարժանց շինողէք հաշուելու: 400 տրամը կ'արժէ մէկ օխա: 6 օխան կ'արժէ մէկ լիտր (պաթման):

19. Թուրքիայի մէջ ծանրութեան չափին միութիւնը ո՞րն է: Կրամը աւելի ծանր է քէ՛րամը: Ոսկի, արծաթ եւ բանկագին քարեր ի՞նչ կեխով կը ծախուին:

Վարժութիւններ. 11. Մտրդ մը շուկայէն գնեց 100 տրամ խանփէ, 300 տրամ շարքար, 5 օխա հաց, 150 տրամ կորագ, 250 տրամ մեղր, ընդամենը քանի օխա բան գնեց: — 12. Մէկ տրամ գունաւոր մետաքսը կ'արժէ 0,875 զրուշ. իսկ մէկ տրամ գուտ արծաթը կ'արժէ 2,75 զրուշ. գտէք թէ 100 տրամ արծաթով քանի տրամ մետաքս կրնանք գնել:

10. ԴԱՍ. — ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐԸ (Շար.)

20. Ծանրութիւն ցուցնող քիւերը ի՞նչպէս կը գրուին, ի՞նչպէս կը կարգացուին. — Կրամը հաշիւով եղած բոլոր թիւերը տասնորդականներու պէս կը գրուին ու կը կարգացուին: Այսպէս 5 հազարակրամ 18 հարիւրորդակրամը կը գրուի 52.4.18: Տրամ ցուցնող թիւերն ալ կարելի է տասնորդականով գրել: Ինչպէս 2 օխա 100 տրամ կը գրուի 2հ.,25. հոս 0,25 (25 հարիւրորդը) հաւասար է 100 տրամին, որովհետեւ 100 տրամը մէկ օ-

(*) Չափոնել՝ տրամ, կրամ եւ զրամ:

խային քառորդ մասն է: Ուրեմն 400 տրամ=1 օխա: 100 տրամ=0,25 օխա: 50 տրամ=0,125 օխա: 200 տրամ=0,5 օխա, եւ այլն:

Ման. — Կշիռներու և ուրիշ չափերու համար սովորաբար կը գործածուին ֆրանսերէն անունները, այսպէս՝ հազարակրամ, հարիւրորդակրամ, եւ այլն տեղ կ'ըսեն ինչօրեւէ (կամ պարզապէս քիւ), սակայն կրամ, միլիկրամ:

20. Կրամ ցուցնող քիւերը ի՞նչպէս կը գրուին ու կը կարգացուին: Տրամը սովորաբար ի՞նչ ձևով կը գրուի ու կը կարգացուի:

Վարժութիւններ. — 13. Գինեպան մը տակառ մը գինի պարպեց բազմաթիւ շիշերու մէջ. տակառը կը պարունակէր 175 օխա գինի. բայց շիշերէն ամէն մէկը հազիւ 250 տրամ (0,625 օխա) կ'առնէր. հիմա գտէք թէ քանի շիշ պէտք եղաւ. եւ յետոյ ամէն մէկ շիշը քանիի պէտք է ծախէ, եթէ հարիւր տրամին գինը 0,875 զըշ. ըլլայ: — 14. Ծառի մը վրայէն 387 խնձոր բաղեցինք. խնձորներուն միջին ծանրութիւնն է 12,5 տրամ. կրնանք գտնել թէ քանի օխա խնձոր կար ծառին վրայ:

11. ԴԱՍ. — ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐԸ (Շար.)

21. Ի՞նչ բանով կը կշռեն. — Այլեւայլ նիւթերու ծանրութիւնը գտնելու համար կը կշռեն այդ նիւթերը կշիռի մէջ (թերազի): Շատ տեսակ կշիռներ կան, ամէնքն երկու նժար ունին: Այս նժարներէն մէկուն մէջ կը դրուի ծանրութեան չափերը, տրամ, օխա (կամ կրամ, քիւ), եւ այլն. միւսին մէջ ալ այն նիւթը դորպէտք է կշռել: Այսպէս՝ շուկային մէջ նպարեղէն, պտուղ և բանջարեղէն վաճառողները կը գործածեն կշիռ:

21. Աւարկայի մը ծանրութիւնը գտնելու համար ի՞նչ կ'ընեն: Օրինակներ տւէք:

Վարժ. — 15. Շուկայէն շարքար գնած ոտենս, զիտեցի որ մէկ նժարին մէջ զրուած է 1,5 օխանոց. Նժարները հաւասար եկան. քնչ վճարելու եմ, եթէ շաքարին օխան 4,5 զըշ. ըլլայ: — 16. 3 օխա 100 տրամ

խաճուէն քանի զըշ. կ'արժէ եթէ օխան 12 զըշ.ի ծախուիւ — 17. Բժիշկին յանձնարարութեան վրայ երկու տեսակ զեղ զնեցի, առաջինէն 25 կրամ. կրամը 1,25 զըշ.ի. իսկ երկրորդէն 85 կրամ, կրամը 0,125 զըշ.ի. Ինչ պիտի վճարեմ:

12. ԴԱՍ. — ԾԱՆՐՈՒԹԵԱՆ ՁԱՓԵՐԸ (Շար.)

22. Կշիւներ. — Տրամներու համար երկաթէ կամ քարերէ շինուած մասնաւոր ծանրոցներ կան: Այսպէս, կայ 25 տրամնոց, 50, 100, 200 տրամնոց և մէկ օխանոց: Իսկ կրամներու համար նոյնպէս կայ մէկ կրամէն սկսած՝ մինչեւ մէկ քիլոկրամնոց մետաղէ (երկաթ, արոյր, պղինձ) շինուած ծանրոցներ, որոնք օրէնքով ճշգրտած են և կը գործածուին:

23. Այս սովորական կշիւներէն զատ կը գործածուի խանքար մեծ քանակութեամբ ապրանքները կշռելու համար: Մէկ խանքարը 180 օխա է: Փայտը կշռելու համար մասնաւոր չափ մը կը գործածուի, այս է յեֆին: Մէկ չէքին 44 օխա է:

22. Ծանուրեան չափեր ինչո՞վ կը շինուին եւ ի՞նչ ձեւով: — 23. Ի՞նչ է խանքար եւ քանի՞ օխա է: 2kֆի քուածն ի՞նչ է:

Վարժուրիւններ. — 18. Անտառ մը՝ տարին 15850 օխա փայտ կուտայ. եթէ մէկ չէքին (44 օխա) 13,5ի ծախեն, քանի զըշ. կը շահին անտառէն. — 19. Զորեպան մը 20 խանքար ապրանք բեռցած է՝ խանքարը 158 զրուշ. կրնո՞ր ըսել թէ ջորեպանը ընդամենը քանի զըշ. պիտի առնէ եւ օխային քանի զըշ. ուռած կ'ըլլայ:

13. ԴԱՍ. — ԴՐԱՄՆԵՐ

24. Դրամներ. — 1. Դրամները կը շինուին պղնձէ, պղնձախառն արծաթէ (մէթալիք), արծաթէ և ոսկիէ: Մեր դրամները կա՛մ մէթալիք են, կա՛մ արծաթ, կա՛մ ոսկի: 2. Դրամները կը որածնու են, մեծ ու փոքր կ'ըլլան.

մէկ երեսին վրայ կայ Օսմ. թուղրան(*), մյուսին վրայ քանի մը Արաբերէն բառեր գրուած են և այն տարուան թուականը որ ստակը կոխուած է: (Ը. Պրակ, Բաղաֆ. Կրթութիւն, Դաս 4, էջ 13): Օսմանեան դրամներուն արժէքը իրենց վրայ գրուած չէ, բայց վարժուելով կարելի է զանոնք ամէնքն ալ լաւ ճանչնալ:

24. 1. Ի՞նչ մետաղէ կը շինուի դրամը: 2. Ի՞նչ ձեւ ունի՞ն դրամներ, ի՞նչ գրուած է անոնց վրայ:

14. ԴԱՍ. — ԴՐԱՄՆԵՐ (Շար.)

25. Մէթալիք դրամներ. — Մէթալիք դրամները պղնձի և արծաթի խառնուրդովը շինուած են: Կայ մէթալիք 5 փարանոց (չատ քիչ), 10 փարանոց, 20 փարանոց, 50 փարանոց և 100 փարանոց: 2 հատ 5 փարանոց՝ կ'արժէ 10 փարա, 8 հինգ փարանոց՝ կ'արժէ 40 փարա կամ մէկ զրուշ: 4 հատ տասնոց՝ կ'արժէ 40 փարա կամ մէկ զրուշ: 50 փարանոցը մէկ զըշ. և 10 փարա ըսել է: 100 փարանոցը 2ուկէս զըշ. ըսել է: Երկու 50 փարանոց՝ կ'արժէ հարիւր փարա: Երկու հարիւր փարանոց՝ կ'արժէ 5 զրուշ:

25. Ի՞նչ տեսակ խառնուրդ է մեթալիք կոչուած մանր դրամը:

Վարժուրիւններ. — 20. Հայր մը խոստացած է իր զուկին՝ 10 փարանոց մը տալ ամէն անգամ որ տղան թուարանութեան դասին 8 թիւ առնէ. տղան շարաթը երկու անգամ կը յաջողի 8 թիւ առնելու: Երբ տալին լմնայ, տղան քանի տասնոց եւ քանի զըշ. կ'ունենայ (զպրոցական

(*) Թուղրա Օսմ. կայսերական կնիքն է՝ ձեռքի ձեւով՝ որ Երրորդ Ինքնակալ Սուլթան Մ. առաջին Խիւսալիեհիկեարի օրով յօրինուած է: Անկէ առաջ, Օսմ. Ինքնակալները Ուկուզեաններու (Օսմանցիներու նախնիքներուն ցեղական անունը) սովորութեան համեմատ, կարելոր պաշտօնագրերու վրայ իրենց ձեռքը կը կոխէին կարմիր ներկով:

շարժանները 42 շարժ հաշուելով)։ — 21. Մարդ մը օրը 50 փարա նախանշի, 100 փարա կէս օրուան եւ 150 փր. իրիկուան ճաշին կը ծախսէ. մէկ ամսուան մէջ բաննի զրշ. կուտայ նախանշաշին, բաննի՝ կէսօրուան եւ բաննի՝ իրիկուան ճաշերուն. եւ ընդամէնը բաննի զրշ ծախք կ'ընէ:

15 ԴԱՍ. — ԴՐԱՄՄԵՐ (Շար.)

26. Արձաք դրամներ. (*) — Արձաք դրամներուն աւմէնէն խոշորը մէճիտիցէն է որ կ'արժէ 20 զրուշ. յետոյ կէս մէճիտիէ որ կ'արժէ 10 զրուշ. քառորդ մէճիտիցէ որ կ'արժէ 5 զրուշ. 2 զրուշնոց, 1 զրուշնոց կամ 40 փարանոց, վերջապէս 20 փարանոց) որ շատ պղտիկ արձաքիէ դրամ մ'է:

26. Արձաք դրամներուն մէջ է՛ն խոշոր ո՛րն է: Քանի՞ տեսակ մէճիտ դրամ կայ:

Վարժուքիւններ. — 22. Մարդ մը իր քսակին ստակը համբց եւ գտաւ 8 մէճիտիէ, երկու քառորդ մէճիտիէ, 3 հոտ երկուքնոց, 2 հատ քառասուն փարանոց եւ 1 հատ 100 փարանոց. կրնա՞ք ըսել թէ այս մարդը բաննի զրշ. ունէր: — 23. Երեք հատ քառորդ մէճիտով գնեցի 5 զոյգ դուլպոյ, զոյգը բաննի զրուշի եկաւ: — 24. Զոյգ մը կոշիկ գնած ատենս, խանութպանին վճարեցի երկու մէճիտ, մէկ քառորդ եւ հարիւր փարանոց մը. գտէ՞ք կոշիկին գինը: — 25. Մէկ մէճիտիէին վրայ քառասուն փարա դնէք, բաննի քառորդ կուտայ ձեզի լումայափոխը: — 26. Երկու քառորդի վրայ երկու տասնոց դնէք, բաննի հատ երկու զրուշնոց կամ մէկ զրուշնոց կրնա՞ք առնել:

(*) Օսմանեան առաջին արժամ դրամը կոխուած է երկրորդ ինքնակալ Սուլթան Օրխանի օրով. Առաջին դրամը կը կրէ հիճարէի ՎԻՂ Թուականը (Հիճարէք՝ Արարբէն է եւ կը նշանակէ գաղթել, իսկ հիճարէի քուսականը կը սկսի իսլամներու Մարգարէին Մէքքէէն Մէտիէն երթալէն որ կը համապատասխանէ Քրիստոսի 622 Թուականին)

Օսմ. արժամ դրամները մեճիտիցէ կը կոչուին Բարեյիշատակ Սուլթան Մէճիտ Կայսեր անունով:

Իսկ առաջին անգամ Օսմանեան ոսկեղրամ կոխուած է Ֆաթիհ Սուլթան Մէճիտի օրով (1451—1481):

16 ԴԱՍ. — ԴՐԱՄՄԵՐ (Շար.)

27. Ոսկիէ դրամներ. — Օսմ. ոսկին 100 զրշ. կ'արժէ, բայց առուտուրի մէջ երբեմն 108, 107, 106, 105, 103 զրշ.ի կ'առնեն կուտան: Տեղ տեղ մինչեւ 132 զրշ.ի կը բարձրանայ անոր արժէքը: Առուտուրի մէջ ամէնէն սովորականը 108 զրշ.ն է: Կէս ոսկին կ'արժէ 50 կամ 54 զրուշ. քառորդ ոսկին կ'արժէ 25 կամ 27 զրուշ: Եթէ լումայափոխին 5 մէճիտիէ եւ 6 կամ 6 ուկէս զրշ. տաք, (ժամանակին համեմատ), ձեզի պիտի տայ 1 Օսմ. ոսկի: Նոյնպէս եթէ դուք իրեն ոսկի մը տաք, ժամանակին համեմատ, ձեզի կը վճարէ 106, 106,5, 107, 107,25, 107,50 եւն. զրուշ: Այսպէս միւսներն ալ:

27. Որո՞նք են ոսկի դրամները եւ ի՞նչ է անոնց արժէքը:

Վարժուքիւններ. — 27. Մէկը 6 օխա խաճուէ եւ 35 օխա շաքար գնեց, առաջինին օխան 11,5 զրշ.էն, երկրորդինը 2,5 զրշ.էն եւ խանութպանին տուաւ երկու Օսմ. ոսկի. ինչ պիտի ետ առնէ: — 28. Երեք կտոր զիրք գնեցի՝ հատը 6,5 զրշ.էն, եւ մարդուն տուի մէկ քառորդ ոսկի (ոսկին 108 զրշ.էն). բաննի զրշ. ետ պիտի առնեմ զրամստուէն:

17. ԴԱՍ. — ԴՐԱՄՄԵՐ (Շար.)

28. Ի՞նչպէս գրելու է դրուշի հաշիւները ցուցնող քիււերը. — Դրուշի հաշիւները կարելի է զրուշ եւ փարա գրել. այսպէս 2 զրշ. 10 փարա. 8 զրշ. 20 փարա. 16 զրշ. 30 փարա. 3 զրշ. 5 փարա, եւ այլն: Բայց տասնորդականով ալ կրնանք գրել, այսպէս. 10 փր.=0,25, 20 փր.=0,5, 30 փր.=0,75, 5 փր.=0,125:

29. Փարսն աստուրգակացի վերածելու եղանակը. — Մենք դիւրաւ կրնանք փարսն տասնորդականի վերածել: Այսպէս 2 զրշ. 15 փարսն, եթէ ուզենք տասնորդականի ձևով ցուցնել, չենք կրնար 2,15 գրել:

Պէտք է՝ 15 փարան տասնորդականի վերածելու համար՝ բաժնել զայն 40 փարայով: Այսպէս. 15 : 40 = 0,375 :

$$\begin{array}{r|l}
 150 & 40 \\
 300 & 0,375 \\
 200 & \\
 00 &
 \end{array}$$

Այսպէս կրնանք գտնել 5, 10, 20, 25, 30, 35 փարաներուն արժէքը, որոնք շատ կը գործածուին խնդիրներու և սովորական

առուտուրի մէջ: 2 փարան հաւասար է 2 : 40ի, որ տասնորդականով կուտայ 0,05 զըշ. 6 փարային տասնորդական արժէքը կը գտնենք հետեւեալ կերպով: 40ը 6ին


$$\begin{array}{r|l}
 6 & 40 \\
 60 & 0,015 \\
 200 &
 \end{array}$$

մէջ չի կայ, 0. աս զերօն կը դընենք ստորակէտէն յետոյ. 40ը 60ին մէջ կայ 1 անգամ՝ կ'աւելնայ 20 : 40ը 200ի մէջ կայ 5 ան-

գամ: Ուրեմն 6 փարան կ'արժէ 0,015 զըուշ:

30. Ֆրանկ. — Ֆրանքը ֆրանսական դրամն է և շատ կը գործածուի Եւրոպայի մէջ: Մէկ ֆրանքը գրէթէ 4ուկէս զըշ. կ'արժէ: Մէկ ֆրանքը կը բաժնուի 100 հաւասար մասերու, (այս ամէն մէկ մասը կը կոչուի անրիւմ), ինչպէս մեր զըուշը կը բաժնուի 40 հաւասար մասերու կամ փարաներու: 20 ֆրանք կ'արժէ մէկ հաւարդէն կամ ֆրանսական ոսկի: Ֆրանքի հաշիւները տասնորդականով կը գրուին. այսպէս 4 ֆր.ուկէս՝ կը գրուի 4,5 ֆր. կամ 4 ֆր. 50 սանթիմ: 8,25 ֆր. կը ցուցնէ 8 ֆր. և քառորդ ֆրանք:

28. Արուսի հաշիւը ի՞նչպէս գրելու է: — **29.** Փարան ի՞նչ էրանակով կարելի է քանոնողականի վերածել: Նոյն հաշիւով՝ շինեցէք 1էն մինչեւ 40 փարային քանոնողականը ցուցնող աղիւսակը: — **30.** Ի՞նչ է ժրանքը, ի՞նչ է սանդիմը: ի՞նչ է նաբոլէն ոսկին:



18. ԴԱՍ. — ԺԱՄԱՆԱԿԻ ԶԱՓԵՐԸ

31. Օրը, ժամը, վարկեանքը, երկվարկեանքը. — Ժամանակին չափը ամէնէն աւելի օրն է: Մէկ օրը հաւասար է 24 ժամի: Մէկ ժամը 60 վարկեանէ կազմուած է և մէկ վարկեանը հաւասար է 60 երկվարկեանի:

32. Շարքը, ամիսը, տարին, դարը. — Եօթը օր (Բշ. Գշ. Դշ. Եշ. Ուր. Շը. Կիր.) կը կազմեն շաբաթը: Մէկ ամիսը սովորաբար 30 կամ 31 օր ունի, մինակ Փետրուար ամիսն է որ 4 տարին անգամ մը 29 օր կ'ըլլայ, իսկ ուրիշ տարիներ՝ 28 օր է: Այս ամիսներն են. Յունվար 31 օր, Փետրուար 28 կամ 29 օր, Մարտ 31 օր, Ապրիլ 30 օր, Մայիս 31 օր, Յունիս 30 օր, Յուլիս 31 օր, Օգոստոս 31 օր, Սեպտեմբեր 30 օր, Հոկտեմբեր 31 օր, Նոյեմբեր 30 օր, Դեկտեմբեր 31 օր: Ասոնց գումարը կ'ընէ 365 կամ 366 օր: Ուրեմն տարին 12 ամիս կամ 365—366 օր ունի: Հարիւր տարին 1 դար է:

31. Որո՞նք են ժամանակի չափերը: — **32.** Որո՞նք են շաբաթուան օրերը, ի՞նչ է ժամանակին է՛ն պզտիկ չափը և ի՞նչ բազմապատկեր ունի:

Վարժուրիւններ. — **29.** Քանի վայրկեան կ'ընէ 3 օրը. — **30.** Մէկ դարը քանի ամիս և քանի շաբաթ կ'ընէ: — **31.** Քանի զըշ. կ'ընէ 10 ֆրանքը, 12 ֆրանքը, 15 ֆրանքը, 20 ֆրանքը. — **32.** Գումարեցէք(*). 8 զըշ. 25 փարա, +7 զըշ. 17 փարա, + 79 զըշ. 32 փարա, +1014 զըշ. 22 փարա: — **33.** Մարդ մը պատ շարելու համար աշխատեցաւ 16 օր, 9 ժամ, 28 վայրկեան: Ուրիշ մը՝ 15 օր, 16 ժամ 40 վայրկեան: Առաջին գործաւորը երկրորդէն քանի ժամ աւելի աշխատեցաւ: — **34.** Գրպան ունէի 1 լիրա, 3 մէճիտ և 7 զըուշ: Աս դրամէն 78 զըշ. 20 փարա ծխասեցի. հիմա քանի զըշ. ունիմ գրպանս:

(*) Խառն թիւերու չորս գործողութեան կերպերը բացատրելով ուրիշ խնդիրներ ալ ընել տուէր:

19. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Թ. ԱՄՍՈՒԱՆ (1—7)

Ծառալի չափեր. — (1—4). Ծառալի գլխաւոր չափն է խորանարդ մեղրը, որուն ամէն մէկ երեսը մէկ քառակուսի մէջը է: Խոր. մէղրին բազմապատիկներն են. (ԽՏԺ.), խոր. հարիւրամէջը (ԽՀԺ.), խոր. հազարամէջը (ԽՀԺ.) և խոր. բիւրամէջը (ԽԲԺ.): Իսկ ստորաբաժանուներն են. խոր. տասնորդամէջը (ԽԿԺ.), խոր. հարիւրորդամէջը (ԽՀԺ.) և խոր. հազարորդամէջը (ԽՀԺ.):

Պարունակութեան չափեր. — (5—13). Հեղուկներ չափելու համար կը գործածուի շիյրը որ մէկ քիլոկրամ ծանրութեամբ հեղուկ կրնայ պարունակել: Բայց մեր մէջ աւելի կը գործածուին՝ օխանոց, կէս օխանոց, հարիւր տրամոց, 50 և 25 տրամոցներ, որոնցմով շուկային մէջ կը ծախեն նաւթը, կաթը, եւայլն: Իսկ հացահատիկներու համար, կը գործածուի քիլէ, շինիկ, էօլէք, գուլթու: 1 քիլէ=4 շինիկ, 1 շինիկ=4 գուլթու:

Թղթի եւ հասի չափերը. — (14—15). Թղթի ծրարներն ալ մասնաւոր կերպով կը համրուին. այսպէս, 5 թերթը հաւասար է 1 պրակի, 20 պրակը հաւասար է 1 տրցակի, կամ՝ մէկ ծրարը հաւասար է $5 \times 20 \times 4 = 400$ թերթերու: Իսկ հատով եղած բաները սապէս կը հաշուուին. 12 հատը մէկ ռոզինա, 12 սուղինան 1 կրոցա:

Վարձուքիւններ. — 35. Ընտիր Թուրքին մէկ Թերթը 1 փարա ե-
թէ արժէ, 1 պրակը քանի եւ 1 ծրարը քանի զըշ. կ'արժէ: — 36. Մէկ լիթր գինին եթէ 2,75 զըշ. արժէ, կրնանք ըսել Թէ տակաւ մը, որ 2 Թօնօ կը պարունակէ. քանի պիտի արժէ: — 37. Մարդ մը իր ձիերուն կը կերցնէ օրը 15 գուծու գարի եւ մէկ բիլէ գարին կը զնէ 9,5 զըշ. կըր-
նանք ըսել Թէ մէկ ամիսը քանի զըշ. ծախք կ'ընէ ձիերուն համար: — 38. Մէկուկէս մէջը կերպասը 2,25 ֆր. սակարկեցիք. 32,5 մէջըին համար ինչ պիտի վճարենք: — 39. Մէկ խորանարդ մէջըը քանի լիթր չուր կը պարունակէ:

20. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Թ. ԱՄՍՈՒԱՆ (Շար. 8—18)

Ծանրութեան չափերը. (16—23). Ծանրութեան գլխաւոր չափը կրամն է, 1000 կրամ կ'ընէ 1 ֆլորկրամ կամ ֆլյօ. Իսկ 1000 քիլօն կ'ընէ 1 սակաւաչափ կամ բօնօ: Մեր մէջ աւելի շատ կը գործածուի տրամը: 400 տրամը կ'ընէ 1 օխա, 6 օխան կ'ընէ 1 պարսնակ կամ շիս: 30 պաթմանը կ'ընէ 1 խակար: Իսկ 44 օխան կ'ընէ 1 յէֆի: 2էքին փայտը կշռելու համար, իսկ քանի-
թարը ապրանքներու համար կը գործածուի:

Դրամներ. — 24—30). Թուրքիոյ դրամներուն գլխաւոր չափը կամ միութիւնն է զրուշը, զրուշէն բարձր՝ մէճիտիյէ և Օամ. ոսկի կայ, իսկ զրուշէն վար՝ փարա կայ: Թուրքիոյ դրամները երեք տեսակ են՝ մեքալիֆ, արծաթ և ոսկի: Մէթալիք դրամներն են՝ 5 փարանոց, 10, 20, 50 և 100 փարանոցներ: Արծաթ դրամներն են՝ 1 զրուշնոց, 2 զրուշնոց, 5 զրուշնոց, (որուն յէյրեֆ կամ ֆառոդ ալ կ'ըսուի), կէս մէճիտնոց և մէկ մէճիտիէ: Ոսկի դրամներն են՝ Օամ. լիբան, որ 100 կամ 108 զըշ. կ'արժէ, կէս լիբան 50 կամ 54 զըշ. և քառորդ լիբան 25 կամ 27 զըշ.: Ֆրանքը Եւրոպական դրամ է և մեր 4 ուկէս զըշ.ին չափ արժէք ունի. 1 ֆրանքը 100 սանդիլ կ'արժէ:


Ժամանակի չափեր. — 31—32). Ժամանակի գլխաւոր չափը օրն է: Օրը բազմապատիկներ ունի. այսինքն՝ շաբաթ, ամիս, տարի, դար: Ստորաբաժանումներ ալ ունի՝ ժամ, վայրկեան, երկվարկեան:

Վարձուքիւններ. — 40. Եթէ 100 կրամ կամ 30 կրամ պանիր տայ, կրնանք գտնել Թէ 25 բիլօ կամով քանի բիլօ պանիր կրնանք շինել: — 41. Երկրագործ մը 185 օխա զետնայինձորը ծախեց՝ պամանը 8,5 զըշ.ի. քանի զըշ. արժեց ամբողջ գետնայինձորը: — 42. Տարին 18 ոսկի կը վճարեմ սենեակիս փարձը, օրը կէս մէճիտիէ՝ ուսելիքի և 3 ամիսն անգամ մը կէս ոսկի՝ կօշիկի եւ 6 ամիսն անգամ մը 13,5 մէճիտիէ՝ հագուտի. քանի զըշ. է տարեկան ծախսը: — 43. 50 հատ տանոց, 25 հատ քանոց, 42 հատ 50 փարանոց եւ 3 հատ 100 փարանոցը տանք, քանի մէճիտիէ կրնանք առնել, մէճիտիէն 19 զըշ. հաշուելով:

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ԴԱՍ. — ԲԱՐԵՐԸ

1. Հողը ֆարեհ կազմուած է. — Տեսած էք հարկաւ լերան մը կողը, զոր անձրեւի ջուրերը փորած են: Հոն ահագին քարեր դուրս ցցուած են, քիչ մը վարը աւելի փոքր քարեր և ճամբուն եզերքը աւազ: Տեսած էք արդեօք՝ երբ ասն մը հիմը կը փորեն, ի՞նչ խոշոր քարեր կը տեսնուին: Ուր որ գետնին հողը փորէք, հոն կը



Պատկ. 81. — Ճամբու մը եզերք, ուր կ'երեւան գետնին սակի ծայրերը:


գտնէք շատ մը մանր ու խոշոր քարեր: Այս քարերը անձրեւի տակ կը փշրուին և առաջ կը բերեն աւազ ու հող: Ուրեան հողը ֆարեհ շինուած է, այդ քարերը մանրուելով՝ առաջ կը բերեն մեր տեսած սովորական հողը: (Պատկ. 81):

1. Լեռան մը կողին վրայ ի՞նչ կը տեսնուի, երբ հողը բացուած է: Տուցի մը հիմերուն սակ ի՞նչ կը գտնուի:

2. ԴԱՍ. — ԲԱՐԵՐԸ (Շար.)

2. Բարահանք. — 1. Բարը շատ օգտակար է մարդու. անոնցմով կը շինեն տուներ, կը սալարկեն փողոցներ, կը շինեն կամուրջներ: Հողին տակը քարի մեծ կոյտեր կան: Տեղ տեղ կը բանան դանոնք և քարերը կտորակելով դուրս կը հանեն. այս է ֆարահանքը: (Պտկ. 82):

2. Տեսնենք թէ ի՞նչպէս կ'աշխատին քարահանքին մէջ: Աւաակի գործաւոր մը որ սուր կացնիով քարին



Պարկ 82. — Բարահանքէն հանուած քար կը կտրեն: Սուրեկրեայ հանքին դուր:

եզերքները կը փորէ, յետոյ անոնց մէջ կը դնէ երկաթէ սեպ (չիվի) և մուրձով անոնց վրայ կը զարնէ: Սեպը քարին մէջ կը մխուի ու խոշոր կտոր մը կը բաժնուի վար կ'իջնայ: Գործաւորը այդ խոշոր կտորը աւելի պզտիկ կտորներու կը վերածէ, և սալերու, կառքերու վրայ կը բեռցնէ: Երբեմն, ճամբաները շինած ժամանակ, կը հանդիպին կարծր ու մեծ քարերու, այն ատեն կը ծակեն այդ քարերը, ծակին մէջ կը լեցնեն վառօդ և


մէջը կ'իջեցնեն պատրոյգ մը, յետոյ կը վառեն պատրոյգին ծայրն ու կը հեռանան: Քիչ ետքը, վառօղը կը բռնկի, կը պայթի և քարը ձեղքատուելով՝ կտոր կտոր կ'ըլլայ: Այն ատեն աւելի դիւրին է այս կտորները հանքէն դուրս հանել և պէտք եղած տեղը դրկել:

2. 1. Ի՞նչ է Բարահանքը: 2. Բարահանքէն խոտը փախը հանելու համար ի՞նչ կ'ընեն:

3. ԳԱՍ. — ԲՈՒՍԱՀՈՂ

3. Բուսահող. — Իրաւ է որ երկիրը քարերէ կազմուած է, բայց երկրին երեսը մըշտ ծածկուած է հողով, որուն վրայ կը բուսնին տունկերը: Երկրի այդ մասին կամ խաւին կ'ըսուի քուսահող:

Բուսահողին մէջ պղտիկ քարերու հետ խառն կը գտնուին բոյսերու մնացորդներ որ հողին տակ ծածկուած են. այս մնացորդները հողը կը զօրացնեն:



Պատկ. ՑՅ. — Բարահանքի մը վերեւ՝ գետնին խաւեր: 2, բուսահող. անոր սակր՝ Ք, ժայռի բեկորներ, եւ է՛ն՝ սակր Փ, ապառաժի մեծ զանգուածներ:

4. Բուսահողը ի՞նչպէս կը կազմուի. — Եթէ դուք անցած էք գետալի իր եղեղքէն որ լերան մը կողերը կը քերէ, կամ եթէ տեսած էք դաշտի մէջէն հոսող մեծ գետի մը բարձր ափերը, ուշադրութիւն ըրած էք հարկաւ որ այդ ափերը վերէն վար տեսակ տեսակ հողերէ

կազմուած են: Այս տեսակ տեսակ հողերուն կ'ըսուի հողի խաւեր: (Պատկ. 83):

Այս խաւերուն գլխաւորները հետեւեալներն են: Հողին երեսի մասը, որուն մէջ բոյսերու շատ մնացորդներ կան, քուսահող կ'ըսուի. հոն կ'աճին սովորական բոյսերն ու տունկերը: Բուսահողին տակ ուրիշ խաւ մը կայ որուն մէջ պղտիկ քարեր և սովորական հողը մէկտեղ խառնուած են և ուր կ'իջնեն ծառերու արմատները:

Այս խաւին ներքինն ալ կը գտնուի ուրիշ խաւ մը որ խոշոր քարերէ կազմուած է: Վերջապէս ամէնէն վարը կը գտնուին աւելի խոշոր քարեր որոնց մէջ ո՛չ հող կայ, ո՛չ բոյս կը բուսնի:


3. Ի՞նչ է բուսահողը: — 4. Բուսահողը ի՞նչպէս կազմուած կ'ըլլայ բլուրի մը վրայ:

4. ԳԱՍ. — ՀՈՂԵՐ

5. Հողին զանազան խաւեր. — Շատ անգամ, երբ հողը բաւական խորունկ փորենք, կը հանդիպինք ձերմակ քարերու, որոնցմէ՛ շինութեան քարեր կը պատրաստեն: Երբեմն այդ քարերու տակ ուրիշ կակուղ քարեր կը գտնուին, ա՛յնքան կակուղ որ, եթէ ջուրով թորջեռ, մատերով պիտի կրնաս շաղկը գտնոնք: Այս խաւին կ'ըսուի կաւ: Ուրեմն շինութեան ձերմակ քարը հողին մէկ խաւն է, կաւն ալ ուրիշ խաւ:

6. Ենթահող. — Բուսահողին տակ գտնուած հողը սովորաբար ենթահող կ'ըսուի: Երկրագործութեան մէջ շատ կարեւոր է գիտնալ թէ այս ենթահողը ի՞նչպէս է: Որովհետեւ, եթէ ենթահողը շատ կաւուտ է, մըշտ ջուր կը պահէ իր մէջ և բուսահողը խոնաւ կը մնայ, իսկ

Եթէ ենթահողը մինակ քարերէ կազմուած է, անձրեւի ջուրերը շուտով հողին տակը կ'անցնին և հողը շատ անգամ չոր կ'ըլլայ:



Պատկ. 84. — Հողին խաւեր ցոյց տուող Բարահանք:

5. Ի՞նչպէս շարուած են, սովորաբար, հողին այլեւայլ խաւերը: Ի՞նչ բնէ է հողի խաւ: — 6. Ի՞նչ է ենթահողը: Երկրագործութեան համար ի՞նչ օգուտ ունի հանցնալ ենթահողերու տեսակը:

5. ԴԱՍ. — ՀՈՂԸ ՀԵՐԿԵԼ

7. Հերկ. — 1. Արտի մը մէջ ցորեն կամ ուրիշ հացահատիկներ (արմէիք) ցանելէ առաջ կը հերկեն դախ:


Հողը հերկողին մանկալ կ'ըսուի: Մաճկալը կը բռնէ արօրին կոթը որուն ման կ'ըսուի և եղները առաջ երթալով արօրին խոյր կը պատուէ հողը. — ասոր կ'ըսուի հողը հերկել: (Պատկ. 85):

Մեր երկրագործերը շատ կանոնաւոր կերպով ու շատ

խելքով կը հերկեն մեր դաշտերու հողերը: Մաճկալը մէկ ձեռքով մաճը կը բռնէ ու մէկ ոտքով երբեմն երբեմն արօրին վրայ կը կոխէ. եղները առաջ կ'երթան և ակօս մը կը բանան: Երբ արտին մէկ ծայրը կը հասնին, մաճկալը անմիջապէս կը դարձնէ եղները, շուտով կը դարձնէ արօրն ալ և նոր ակօս մը կը բանայ առաջինին քով. և այսպէս, մինչեւ որ ամբողջ արտը հերկուի լիննայ:

2. Բայց ինչո՞ւ համար սերմ ցանելէ առաջ կը հերկեն արտերը, արդեօք կարելի չէ՞ ս'ըմը ցանել անմիջապէս, երբ արտը կը քաղուի:

Ոչ. պղտիկ փորձով մը կը համոզուիք որ այդպէս չ'ըլլար: Մաղկի թաղարի մը մէջ չոր ու կարծր



Պատկ. 85. — Հերկ:

հող լեցուցէք, վրան կոխեցէք և մէջը ցորենի հատիկ մը դնելէ յետոյ, նորէն կարծր հող դրէք վրան. չի բուսնիր, կամ եթէ բուսնի ալ, աղէկ չ'աճիր: Որովհետեւ բուսնելու համար պէտք է որ հողը թոյլ ըլլայ և մէջը օգ մտնէ:

7. 1. Արտը հերկելէ առաջ ի՞նչ կ'ընեն: Ըսէ՛ք, ի՞նչպէս կը հերկեն: 2. Ինչո՞ւ դաշտերը կը հերկեն, ցանելէ առաջ:

6. ԴԱՍ. — ՊԱՐԱՐՏՈՒԹԻՒՆ

8. Աղբ. — Տեսած էք հարկաւ որ արտերու վրայ՝ ախտուի, գոմի աղբեր և հանքային նիւթեր կը լեցնեն, շատ անգամ աղտոտած հողերը կը ժողվեն, պարտէզին մէջ կը տարածեն: Ասոնք շատ հարկաւոր են. հողը անոնցմէ ոյժ, պարարտութիւն կ'առնէ, ասոնց կ'ըսուի աղբ:

9. Հանքային աղբեր. — Բայց մինակ կուլերու, ճիւրու՝ մէկ խօսքով ընտանի կենդանիներու աղբերով չէ որ հողը կը պարարտացնեն: Շատ անգամ դաշտի մը հողը շատ կաւ կը պարունակէ, անոր վրայ կրակող կը լեցընեն, իսկ երբ աւաղը շատ է, անոր հետ կաւ կը խառնեն և ուրիշ տեսակ տեսակ հողեր, և հողին տակէն հանուած հանքեր, որոնց անունները յետոյ պիտի սորվինք: Անոնց ամէնուն կ'ըսուի հանքային աղբեր:

10. Բոյսերու մոխիրը. — Տեսանք արդէն որ, երբ փայտ կամ ածուխ վառէինք, մոխիր կը մնար. մոխիրը հանքային նիւթ է և չի վառիր: Բոլոր երկրագործները հասկցած են թէ մոխիրը բոյսերուն օգտակար է, որովհետեւ, երբ հողին հետ խառնուի, հողին կուտայ այն բաները զոր բոյսերը անկէ առած են:

Ասոր համար է որ մեր երկրագործներէն շատերը, արտերը քաղելէ յետոյ, մնացած ծղօտները կ'այրեն որ մոխիրը հողին հետ խառնուի: Ծովեզերքները բուսած տունկերն ալ կ'այրեն և փոշին արտերու մէջ կը տարածեն որ հողը ուժովայ:



8. Ի՞նչ բնէ է աղբ: — 9. Հանքային աղբեր բոյս: — 10. Բոյսեր վառելէ ետք ի՞նչ կը մնայ: Ի՞նչպէս կը գործածեն մոխիր իբրև հանքային աղբ:



7. ԴԱՍ. — ԱՐՏԵՐԸ ԶՐԵԼ ԵՒ ՅԱՄԲԵՑՆԵԼ

11. Արտը ջրի. — Յայտնի է որ եթէ թաղարի մը մէջ տնկուած ծաղիկը բնաւ չըրենք, ծաղիկը կ'ոչնչաւնայ: Առանց ջուրի, հողը կը չորնայ և ծաղիկին մտուդ չի տար:

Որչափ կ'ուզէ թող աղէկ ըլլայ արտի մը հողը, որչափ աղբ կ'ու-



ղեն թող խառնեն հետը, առանց ջուրի, բոյսերը աղէկ չեն աճիր և կը վառուին: Արտ մը ջրելու համար կամ շատ անձրեւ գալու է գարնան վերջերն և ամբան սկիզբները, կամ գետակներէ ու գետերէ ջուր հանելու է՝ դայն կանաւոր կերպով ջրելու համար, իբրուն ձեւը ցոյց կուտայ թիւ 86 Պատկերը: Մեր երկրագործներու մէջ շատ առաջ գացեր է արտը ջրելու եղանակը:

Պատկ. 86. — Զրանցով արտը ոռոգել: Կուտայ թիւ 86 Պատկերը: Մեր երկրագործներու մէջ շատ առաջ գացեր է արտը ջրելու եղանակը:

12. Արտը ցամփեցնել. — Հապա ի՞նչ պէտք է ընել՝ երբ արտի մը հողը շատ խոնաւ է, ջրը անոր տակ շատ կաւ կը գտնուի որ բոլոր ջուրերը կը հաւաքէ: Յայտնի է որ այս տեսակ խոնաւ արտի մը մէջ բոյսերը աղէկ չեն աճիր, ինչպէս չէին աճիր շատ չոր ցամաք հողի մը մէջ:

Ծաղկի թաղարին ներքեւ ծակ մը կայ ուսկից աւելորդ ջրերը դուրս կը հոսին . եթէ գոցէք այս ծակը , հողը մըշտ թայ կը մնայ և ծաղիկը կը թուփի : Ուրեմն , երբ արտ մը շատ խոնաւ է , անոր տակի ջրերը հաւաքելու համար՝ հողէ ազուգաներ կը դնեն անոր հողին տակ : Աւելորդ ջրերը այս ազուգաներուն մէջէն դուրս կը հոսին և արտը շատ խոնաւ չի մնար :

11. Ի՞նչ է արժ ուղեքը : — 12. Արք ցամփեցնելու համար , ի՞նչպէս կը հաւաքեն հողին ցակի ջուրերը :

8. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ԻՆՆԵՐՐՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ 1—12

Հողին կազմութիւնը . (1—2) . — Հողը կազմուած է մեծ , փոքր ու շատ մանր քարերէ : Խոշոր քարերը հողին տակէն կը հանեն :

Բուսահող . (3—4) . — Բուսահող կ'ըսուի երկրի երեսը զտնուած հողին , որուն մէջ կ'աճին բոյսերը : Բուսահողը մանրուած քարերէ եւ բոյսերու մնացորդներէն կազմուած է . խոշոր քարերը կամ ապուածները անոր ներքեւ ծածկուած են :

Հողին կանգազան խաւերը . (5—6) . — Երկիրը կազմուած է այլեւայլ տեսակ հողերէ եւ քարերէ , որոնց կ'ըսուի հողին խաւերը : Այս խաւերը իրարու վրայ դրուած են կարգով : Բուսահողին տակը գտնուած հողին ենթահող կ'ըսուի :

Հետկ . (7) . — Յանելէ առաջ , հողը աղէկ մը հերկելու է , որպէս զի տակնուվրայ ըլլայ , մանրուի եւ օդը անոր մէջ թափանցէ :

Աղք . (8—10) . — Բուսահողը տարուէ տարի կը տկարանայ . զանի ուժովցնելու համար , վրան կ'աւելցնեն այլեւայլ նիւթեր , որ մէկ խօսքով աղք կամ պարտաշուրիւն կ'ըսուին : Ո՛չ միայն կենդանիներու աղբը , այլ հողին տակէն հանուած շատ մը հանքեր կը գործածուին հողը ուժովցնելու համար : Մոխիրն ալ հողին ուժ տուող նիւթ մ'է :

Արեւը ջրել եւ ցամփեցնել . (11—12) . — Երբ արտին հողը շատ չոր է , գետերու եւ առուներու ջուրով կը ջրեն զայն : Իսկ երբ արտը շատ խոնաւ է , անոր տակէն ազուգաներ կը դնեն եւ աւելորդ ջուրերը կը ժողկնն :

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ւ

1. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Ը. ԱՄՍՈՒԱՆ

Համաձայնութիւն . — Ընել կամ ըլլալ նշանակող բառը բայ կ'ըսուի : Տէր բային կամ ենթակամ բային նշանակած գործը կատարող անձը կամ իրն է :

Բայը թիւով ու զէմբով պէտք է համաձայնի Տէրբային հետ :
Նեղ , նիլ , նալ եւ չիլ վերջաւորող բայերէն ոմանք ախել , խօսիլ , կարդալ բայերէն տարբեր կը խոնարհին կատարելի ու Հրամայականի մէջ : Այսպէս , տիպար ձեւերէն կը շեղին՝

- Ա. Լծորդուծենէն՝ գսնել , մսնել , ելլել , իջնել , հեծնել , սեսնել .
- Նսեւ առնել , խածնել , քսնել , պագնել :
- Բ. Լծորդուծենէն՝ հասնիլ , բուսնիլ , մեռնիլ , սնցնիլ , հագնիլ , հասնիլ , ծնիլ , սնիլ : Նսեւ սկսիլ , փրքիլ , պրծիլ , նստիլ .
- Գ. Լծորդուծենէն գիտնալ , շոգնալ , մեծնալ , սեռնալ , գողնալ , մոռնալ եւ ուրիշ շատեր :

Նիլ ձեւին վրայ կ'երթան փախիլ , փչիլ , դպիլ , փակիլ , բռնիլ , Գիտելիք . — Նեղ , նիլ , նալ եւ չիլ վերջացող բայեր ալ կան որ այս զարտուղութիւնը չունին եւ տիպար ձեւերուն պէս կը խոնարհին :

Զարնուիլ բայերուն վերջաւորութիւնը արմատական ժամանակներու մէջ տիպար ձեւերէն քիչ շատ կը տարբերի :

Անկանոն բայերուն արմատական գրերն ալ կը փոխուին խոնարհման տեսն :

Բայերուն տեսակները կամ տեսերը . — Բայերը գործողութիւն կամ վիճակ կը ցուցնեն վեց կերպով , որ կը կոչուին Էական , Ներգործական , Զեզոյ , Կրաւորական , Անցողական եւ Մխադեմ :

Կոչական կ'ըսուի այն Անունը կամ Դերանունը որ մէկը կանչելու համար կը դրուի խօսքին մէջ :

Բացայայտիչ է այն բառը որ անձի մը կամ առարկայի մը ո՞վ կամ ինչ ըլլալը բացատրելու համար կը դրուի :

Շաղկապը երկու բառ կամ երկու խօսք իրարու կը կապէ :
Զայնաբկութիւնը կիրք եւ զգացում յայտնող բառ մ'է :

2. ԳԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Ամէն օր երկու ժամ քալէ՛, ամէն գիշեր եօթը ժամ քնացի՛ր, քնանալ ուղելուդ պէս՝ պառկէ՛, արթննալուդ պէս՝ ելի՛ր, ելլելուդ պէս՝ աշխատէ՛: Անօթեհաս՝ կե՛ր, ծարաւնաս՝ խմէ՛ և միշտ յամբօրէն: Պէտք եղած ժամանակ խօսէ՛. գրէ՛ այն դոր կրնաս. ինչ որ կրնաս ըսել՝ ըսէ՛: Երբեք մի՛ մոռնար թէ ուրիշներ քու վրադ յոյս կը դնեն և թէ՛ դուն պէտք չէ անոնց վրայ յոյս դնես: Պէտք եղածէն աւելի մի՛ յարգեր արծաթը. բարի ծառայ մը և չար տէր մ՛է՛ ան: Նախ ամէն մարդուն երէ՛, աւելի անկասկած ըլլալու համար: Մի՛ անարգեր մարդիկը, մի՛ ատեր դանոնք աւելի և մի՛ ծիծաղիր տարապայման կերպով, ցաւակի՛ց եղիր անոնց: Ամէն առտու լոյսը տեսնելուդ պէս՝ մահուան վրայ մտածէ՛: Նո՛յնս ըրէ նաեւ ամէն իրիկու՝ երբ աշխարհ մութին մէջ թաղուի: Երբ շատ տառապիս, ցաւին ուղղակի՛ նայէ. ան պիտի մխիթարէ քեզ ինքնին և քեզի բան մը պիտի սորվեցնէ:

Ջանա՛ պարզ ըլլալ, օգտակար ըլլալ:

1. Նոյն դասին բայերը Սահմանական ներկայ եզակի Ա. Դէմ-
 քով գրեցէք, այսպէս. «Ամէն օր երկու ժամ կը քայլեմ», եւ այլն:

2. Սա բառերը աւելի բացայայտ բնոյ ուրիշ բառեր (հասարակ
 անուններ) գտէք. (Գ. Վարժ. էջ 29, Հրահ 26):

- 1. Թուրքիա — 2. Մատթէոս, Մարկոս, Դուկաս եւ Յովնանէս:
- 3. Կ. Պոլիս — 4. Քրիստոս — 5. Էրէմիաս (Կեսարիա): — 6. Թա-
 դէոս եւ Բարձուղիմէոս: — 7. Պետրոս աղբար: — 8. Ս. Սահակ Ս.
 Մեքորպ, Եզնիկ, Յովնան, Յովսէփ (*):

3. Սա բառերուն եզակի Սեռականը գրեցէք.
 Նաւ, գիտութիւն, ստիպում, տարի, գարի, ձի, ամիս, միս, վանա-
 հայր, աներ, աղջիկ, սէր, Աստուած, տղայ:

(*) Տես 2. Պրակ, 12 էջ, 2. Դաս — Հայոց գրեռու գիւղը:

ՆՄԱՆԱԶԱՅՆ(*) ԲԱՌԵՐ

4. Սա բառերուն նմանաձայններ գտէք.
 Քօղ, կէտ, յարկ, Սանար, կորդ, հարթ, յամբ, Սուկ, դիակ, դայլ,
 փող, յոյլ, բուռ, Սաս, հերու, հառաչ, մարտ, Սոս, դեւ, ձող, որձ, քա-
 մել, փակ, նոյն:

3. ԳԱՍ. — ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

1. Դերանունը վերլուծելու համար, ըսելու է թէ
 ի՞նչ տեսակ է՝ (Էական, Ցուցական, Ստացական, Յա-
 րաբերական թէ Անորոշ). թէ ի՞նչ դէ՛մք է, ի՞նչ թիւ է,
 ի՞նչ հոլով է և ի՞նչ պաշտօն ունի (Տերբայի՞, Սեռի
 խնդի՞ր թէ Բնութեան խնդիր):

Օրինակ. — Ես իեզլե՛ չեմ վախնար: Ես՝ Էական
 Դերանուն, Ա. Դէմք, Եզակի Ուղղական, Տէրբայի՛
 չեմ վախնար բային:

Իեզլե՛ Էական Դերանուն, Բ. Դէմք, Եզակի Բա-
 ցառական, Բնութեան խնդիր՝ չեմ վախնար բային:

5. Սա դերանուններ վերլուծեցէք.
 Իմինէս, քու, դուն, մեզմով, ինձի, բուկիններուդ, իմինիս, անոնց,
 անկէ, բուկիններովդ, իրենին, իրենցմով, որ, որոնցմէ, որուն:

6. Սա բառերուն սանմանը տուէք. (Գ. Վարժ. էջ 82, Հրհ. 79):
 1. Զայնարկութիւն — 2. Շողկապ: — 3. Բայ: — 4. Մակրայ: —
 5. Գոյական — 6. Ածական: — 7. Դասական Ցուական ածական:

7. Սա միասական խօսքերը հասարակականը քրէք.
 Մի ուտէք, չեմ դներ, չի գարներ, չըրի, չըսիր, չեմ ըսեր, մի լար,
 չի բանար, չես տար, չպիտի դառնանք, մի դառնաք, չի՛նար, չպիտի ու-
 տէ, մի երթար, չգացինք, չէք երթար:

8. Ի՞նչ հոլով են շեղագիր բառերը.
 1. Մարդով զրկեցի: — 2. Մարդու կը նմանի: — 3. Մարդ եկաւ:

(*) Նմանաձայն կամ համանչիւն են այն բառերը որ միեւնոյն հը-
 չունն ունին, բայց տարբեր իմաստ եւ ուղղագրութիւն: Օրինակ. Գօշ
 (քարձ=φουκ) եւ ֆօշ (արու այծ, խոյ, նոխազ):

— 4. Մարդու յանաւ: — 5. Մարդի սուր: — 6. Մարդուն պատկերը զծեց: — 7. Մարդ տեսայ: — 8. Կերածես համ չեմ առնեք: — 9. Քաշելիք ունիս եղեր: — 10. Փայցն ու ածուխը կը վառեն: — 11. Փայց ու քար դիզեցինք: — 12. Քովիկներդ մի նեղեր: — 13. Մահուան կը մտնանք ամէն օր: — 14. Աղօթեցէք Աստուծոյ որ ձեզ փրկեց վճանգի: — 15. Հաւաստով ու սիրով ապրեցէք: — 16. Գլխուս փորձանք եղար դուն: — 17. Մտիկն պատրոյզը թրջեցաւ:

9. Նոյն խօսքերուն մէջ շեղագիր բառերն անփոփոխ պահելով՝ ուրիշ բայեր դրէք անոնց իով:

1. Ի՞նչ բաներ ըսելու է Դերամուկը վերլուծելու համար:



4. ԳԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

10. Կէտերուն տեղ դրէք իմաստին յարմար բառերը:

1. Այն բայը որ վիճակ կամ գոյութիւն կը նշանակէ կը կոչուի ... բայ: — 2. Այն բայը որ կը նշանակէ թէ Տէրբայիին ըրած գործողութիւնը կ'անցնի ուրիշի մը վրայ, կը կոչուի ... բայ: — 3. Այն բայը որ գործողութիւն մը կրել կը նշանակէ, կը կոչուի ... բայ: — 4. Այն բայը որ ձեռ յայտնէ թէ գործողութիւնը Տէրբայիին վրայ կը մնայ, կ'ըսուի ... բայ: — 5. Այն բայը որ ուրիշի մը միջոցաւ կատարուած գործ մը ցոյց կուտայ, կը կոչուի ... — 6. Միայն մէկ գէմքով գործածուող բայերը կը կոչուին ... բայ:

11. Պատասխանեցէք սա հարցումներուն.

1. Ի՞նչ ձեւ ունին դրամները: — 2. Որո՞նք են ժամանեան դրամները (արծաթ, ոսկի): — 3. Ո՞չր կը շինուին դրամները: — 4. Ո՞վիով ու արծաթով ինչ բաներ կը շինուին:

12. Ո՞ր բայեր Բնութեան խնդիր կ'առնեն (օրինակներ տուէք):

13. Հարցումներուն պատասխանեցէք բերանացի ու գրաւոր.

ԵՐԲ...

1. Ե՞րբ կը հնչէ կոչնակը: 2. — Ե՞րբ կը թափին ծառերուն տերեւները: — 3. Ե՞րբ կը բացուի վարդը: — 4. Ե՞րբ հաց կ'ուտես: — 5. Ե՞րբ կը թաղեն մարդը: — 6. Ե՞րբ կը ստուի ջուրը: — 7. Ե՞րբ կը շոգիանայ ջուրը: — 8. Ե՞րբ կը հնձեն ցորենը: — 9. Ե՞րբ ձիւն կը տեղայ: — 10. Ե՞րբ կը կարճընայ գիշերը: — 11. Ե՞րբ բծիչի կը դիմենք: — 12. Ե՞րբ ջուր կը խմենք: — 13. Ե՞րբ մարդ կը մտնէ արեւը:

5. ԳԱՍ. — ԱՆԱԿՈՆԸ՝ ԳՈՅԱԿԱՆԻ ՏԵՂ

2. Գոյականի պէս գործածուած անական. — Ուշադիր եղէք շեղագիր բառերուն:

1. Երկու վարդ ունիս, մէկը ճերմակ է, միւսը՝ կարմիր. անունը ինձի տուր. կարմիրը օրհն թող մնայ: — 2. Խելք խրատն ինչ ընէ, սեւը ստափոնն ինչ ընէ: — 3. Մինչեւ խելացիկն մտածէ, անխելիքն իր գործը կը հոգայ: 4. — Երկու խնձոր ունի, անուշը ես կերայ, քրուն քեզի պահեցի:

Ասկէ առաջ մենք սորվեցանք (Ե. Պրակ, էջ 60, Դաս 1) թէ որպիսութիւն ցուցնող բառերը Որակական Ածական են, ինչպէս անունակ, կարմիր, խել, սեւ, խելացի, անխելիք, եւ այլն: Իրաւ ալ ասոնք առարկայ կամ անձ չեն ցուցներ, այլ՝ անձի կամ առարկայի մը ի՞նչպէս ըլլալը: Կրնամ ըսել՝ անունակ մարդ կամ անունակ բան, սեւ երես, խելացի խօսք, եւ այլն: Աս խօսքերուն մէջ Ածականները դրուած են մէյմէկ Գոյականի քով:

Բայց վերը՝ թիւ 1, 2, 3, 4 օրինակներուն մէջ անունակ, կարմիր, խել, սեւ, խելացի, անխելիք, անուշ, քրու Ածականներուն քով Գոյական չկայ:

